

Ռուզան Դոլուխանյան

Մանկավարժական, բարոյախոսական և
հայրենասիրական դասերը «Բազմավեպում»

(1866-1885)

Գիրք երկրորդ

Երևան-2017

Տպագրվում է Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի խորհրդի
երաշխավորությամբ:

Խմբագիր՝ բան.գիտ.թեկնածու,

դոցենտ Գայանե Մարդյան

Աշխատության մեջ ներկայացվում են մանկավարժական, բարոյախոսական, հայրենասիրական այն դասերը, որոնք Վենետիկի սուրբ Ղազար կղզում հրատարակվող «Բազմավեպ» հանդեսն ուղղում էր համայն հայությանը: Դրանք այսօր էլ չեն կորցրել իրենց արժեքն ու արդիականությունը:

Աշխատությունը հասցեագրվում է հայոց լեզվի, հայ գրականության, հայոց պատմության ուսուցիչներին և մանկավարժական բուհերի ուսանողությանը:

Նվիրվում է Վենետիկի Մխիթարյան

միաբանության ս. Ղազար

կղզում հաստատվելու

300 – ամյակին:

Նախաբան

Թագավորին հարցրին, թե որ
խորհրդականներն են ավելի լավ ու
օգտակար: Պատասխանեց «Գրքերը,
որովհետև դրանք առանց շահի ասում
են այն ամենը, ինչ ուզում ես իմանալ»:

Պորփյուր

Այս հետազոտությունը նվիրված է Վենետիկի սուրբ Ղազար կղզում հրատարակվող «Բազմավեպ» հանդեսում տպագրված (1866–1885թթ.) բարոյախոսական, մանկավարժական և հայրենասիրական դասերին: «Բազմավեպ» հանդեսից ընտրել ենք այն նյութերը, որոնք վերժամանակյա են և կարևոր են այսօրվա մանկավարժության դիտակետից: Մեր ընտրած նյութերի մեջ ներառել ենք II դարի հռոմեական կայսեր Մարկոս Ավրելիոսի բարոյախոսական դասերը, որոնք ունեն ճանաչողական մեծ արժեք: Դրանք այսօր էլ կարող են ելակետային լինել ուսուցիչների, ծնողների, պետական պաշտոնյաների համար: Գրքում ներառել ենք նաև Բարսեղ Սարգիսյանի ծավալուն հետազոտությունը՝ նվիրված հայ ժողովրդի՝ ազգերի պատմության մեջ ունեցած դերին, նրա մշակութային ու գիտական նվաճումների միջազգային հնչեղությանը:

Նյութերի մեջ շատ են հին աշխարհի մեծ մտածողների մանկավարժական դրույթները և բարոյախոսական խոհերը: Չեն անտեսվել նաև նոր ժամանակների եվրոպական մտածողների հայացքները և ժողովրդական բանահյուսության խնդիրներին առնչվող դրույթները:

Մեջբերումները, որոնք եղել են արևմտահայերենով և գրաբարով, դարձրել ենք արդի արևելահայերեն՝ բնականաբար փոխելով նաև նրանց ուղղագրությունը:

Հետազոտությունը կունենա նաև III մաս, որը լույս կտեսնի 2019 թվականին:

Ռուզան Դոլուխանյան

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿԶՍԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԽՈՍԱԿԱՆ ԴԱՍԵՐ

Ամեն ինչից դժվարը ինքն իրեն ճանաչելն է:

Առած

«Բազմավեպի» բազմաթիվ համարներում կան խորհրդածություններ դաստիարակության վերաբերյալ: Փաստերով ապացուցվում է, որ շատ հին ժամանակներից սկսած, մարդը մտածել է դաստիարակության մասին՝ դրանում տեսնելով հասարակության առաջադիմությունը: «Դաստիարակությունը հների համար ստեղծագործություն էր, հիրավի արվեստ, որով անհատն իր նմանին ավանդում էր ստեղծագործ ոգի»:¹

Կիկերոնը լավագույն դաստիարակության համար երկու նախապայման էր դնում: **Առաջինը բնածին օժտվածությունը, երկրորդը ճիշտ դաստիարակությունը**, որով կամաց-կամաց բողբոջում է բնածինը և հասնում ցանկալի արդյունքի: Ինչպես բնությունն է մշակության կարոտ, այնպես էլ մանուկին անհրաժեշտ է դաստիարակվել:

Վերջին հաշվով արամեական ծագում ունեցող Խիկար Իմաստունի գրույցները ոչ այլ ինչ են, քան հնագույն դաստիարակության ձեռնարկ, որում Խիկարը դաստիարակում է քրոջ որդուն՝ Նաթանին:

Աշակերտին սովորեցնելը նշանակում է նաև սովորել աշակերտից:² Ուսուցիչը հավերժ սովորող է, նա շարունակ փնտրում է այն ուղիները, որոնք օգնում են նրան կատարելագործելու իր արվեստը:

Մարդկային միտքը համեմատվում է երգեհոնի հետ, որի լարերն իրենք իրենց չեն հնչում: Այն հնչում է, երբ դրանց վրա ճիշտ նվագել գիտի արվեստագետը:

Մանկավարժը իր ազգային լեզվին կատարյալ տիրապետողն է, նա դաստիարակում է ոչ միայն խոսքերով, այլ նաև իր գործերով և վարքագծով:

Ամեն ազգի պատմությունն նաև տվյալ ազգի դաստիարակության պատմությունն է:

¹ «Բազմավեպ», Վենետիկ, 1877, էջ 8:

² Նույն տեղում, էջ 9:

«Բազմավեպի» մանկավարժական ու բարոյախոսական դասերն ուսուցանում են, որ կրթությունն ու դաստիարակությունը մանկավարժության անբաժանելի բաղադրիչներն են:

Դաստիարակությունն ու կրթությունն առավել զարգացնելու համար ամեն ազգ պետք է ունենա անհրաժեշտ կարողալիք գրքեր. «Մարդն իր գործով այնքան է, որքան գիտելիք ունի»:³

«Բազմավեպում» հայկական դպրոցները զարգացնելու համար մանրամասնորեն ներկայացվում են դպրոցական գործի հետ կապված գործընթացները Անգլիայում, Ֆրանսիայում և Գերմանիայում:

XIX դարում Եվրոպայի զարգացած երկրներում ուժեղ ձգտում առաջացավ ողջ բնակչությանը գրագետ դարձնել գոնե տարրական կրթության սահմաններում. «Գերմանիայում և Հոլանդիայում գրեթե անհնար էր գտնել մարդ, որն ընթերցել չիմանար»:⁴ Այդ գովելի երևույթը ժողովրդական դաստիարակության արդյունք էր, քաղաքակրթված լինելու արդյունք:

Լավագույն դպրոցն ամեն մի ազգի արժանապատվությունն է: Կրթված ազգը ի վիճակի է պաշտպանել իր ընտանեկան, ազգային շահերը:

Կարդալն ու գրելը երաշխիք է օրինավոր ազատության և ժողովրդի իրավունքների պաշտպանության համար: Կրթության միջոցով մարդը սովորում է մարդկային հանճարի ձեռքբերումները և սկսում է նոր նվաճումների հասնել:

Նախնական կամ տարրական կրթությունը պարտադիր է, սակայն դրանով չպետք է սահմանափակվել և անցնել առավել բարդ ու կարևոր կրթության, որի մեջ կլինեն աշխարհագրությունը, բնական գիտությունները, երկրագործությունը, հատկապես գյուղատնտեսության հետ կապված գիտությունները, որոնք խիստ անհրաժեշտ են աշխարհի գյուղացիներին, որոնց թիվն ազգի մեջ շատ է:⁵

Ժողովրդի տգիտությունը, համընդհանուր թշվառությունը ոճիրների պատճառ է, և կրթությունը նպաստում է ն՝ բարոյականության զարգացմանը, և՛ ընդհանուր հարստությանն ու բարեկեցությանը:

³ Նույն տեղում, էջ 13:

⁴ «Բազմավեպ», հ. 30, Վենետիկ, 1872, էջ 4:

⁵ Նույն տեղում, էջ 5:

«Բազմավեպը» ամենից օրինակելի է համարում Գերմանիայի կրթական ծրագիրը, որը հաստատվեց Ֆրեդերիկ թագավորի բարենորոգչական օրենքների շնորհիվ: Այն ընդունվեց 1776 թվականին: Նրանում ասվում էր. «Թե ազնվականը և թե հասարակ ժողովուրդը ուսուցչի վրա չպետք է նայի որպես ծառայի, այլ իբրև կարևոր պաշտոնյայի, որի գործն է կալվածատերերի համար ընտիր գործակալներ և ծնողների համար բարի զավակներ պատրաստելը»:⁶ Կրթված մարդը կարող է հասարակ գյուղացուց հասնել բարձր պաշտոնյայի աստիճանի:

«Բազմավեպը» հյուսիսային Եվրոպայի երկրները համարում է կրթված ժողովուրդների մեծ ընտանիք: Հյուսիսային և Բալթիկ ծովի երկրները՝ Հոլանդից մինչև Դանուբ ընկած հատվածը: Պրուսիայում, Սաքսոնիայում, Բավարիայում ունեն բազմաթիվ ընտիր դպրոցներ: Նույնիսկ Գերմանիայի հեռավոր ու փոքրիկ գյուղերն ունեն իրենց դպրոցները:

Հիացմունք են առաջացնում Գերմանիայի դպրոցները, որոնց վրա պետությունը անհաշվելի ծախսեր է արել, որպեսզի դպրոցները լինեն նոր կառուցված ու գեղեցիկ, ունենան մեծ, լուսավոր դասարաններ:

Գերմանական գյուղական դպրոցները այդ բնակավայրերի ամենագեղեցիկ շենքերն են: Դրա համար էլ, երբ օտարականը ընկնում է Գերմանիա՝ հիացած ու զարմացած կանգ է առնում դպրոցական շենքերի առաջ: Եվ որ ամենակարևորն է, այդ դպրոցները ձրի են, ⁷ նրանցում սովորում են գյուղացիների, բանվորների, արհեստավորների զավակները:

Նախակրթական դպրոցները աշակերտներին սովորեցնում են լինել օրինապահ ու աշխատասեր. «Գերմանիայի գյուղացին հաջողության կենդանի տիպար է, ամեն դժվարին գործ ստանձնում է՝ վստահ լինելով իր հաջողությանը: Նրա սնունդը հիանալի է ու առողջարար, զգեստները՝ մաքուր: Տներն ունեն վայելուչ ու հանգստավետ կահկարասի, և գյուղացիները երբեք չեն զլանում օժանդակել իրենց պետության քաղաքականությանը: Քանի որ շատերն են կարդում, ապա գրքերը թանկ չեն և մատչելի են շատերին: Այս բոլորն իմացողը բոլորովին էլ չի զարմանում, որ

⁶ Նույն տեղում, էջ 6:

⁷ Ակամայից հիշում ես մանուկ Նեսոյի ողբերգությունը Հովհ.Թումանյանի «Իմ ընկեր Նեսոն» պատմվածքից, որ դրամ չունենալու պատճառով դպրոց չգնաց ու կործանվեց (Տե՛ս Հովհ.Թումանյան, Ընտիր երկեր, հ.II, Երևան, 1985, էջ 89-99):

Բեռլինի գլխավոր պաշտոնյաները իրենց հանգստի ժամերն անց են կացնում ընթերցանության մեջ և հետևում են աշխարհի նորություններին»:⁸

«Բազմավեպի» նպատակն է Գերմանիայի կրթական մակարդակը օրինակ դարձնել հայազգիների համար: Հայկական լրագիրներից մեկը գրել է, թե Շիրակ գավառի քաղաքներից մեկում, ուր կան 3000 տուն հայազգիներ, միայն 20 հոգի կարդալ գիտի. «Որքան մեծ ու տխուր է այս համեմատությունը, և որքան ծանր է նրա ազդեցությունը հայ ազգի ապագայի վրա»:⁹

Իրավացիորեն կրթությունն ու դաստիարակությունը դիտարկվում են որպես ամեն մի ազգի ապագա: Աշխատել նշանակում է ապրել, և եթե մարդը չի աշխատում, ապա ոչ ինքը և ոչ էլ ուրիշները չեն կարող իմանալ նրա արժեքը: «Միայն բարեկարգ կրթությունն է, որ փայլեցնում է մարդկային կարողությունները»:¹⁰

Ինչպես միջնադարի մեծ փիլիսոփա և ուսուցչապետ Գրիգոր Տաթևացին քրիստոնյա մարդու համար բնութագրում էր բարոյական չափանիշները, այնպես էլ «Բազմավեպում» «Բարոյականք» վերտառությամբ բացատրվում է, թե ինչ ասել է **երջանկություն, հույս, առաքինություն և մոլություն, խղճմտանք, ճշմարտություն**:¹¹

Ամեն մարդ երագում է երջանիկ լինել. թե թագավորը, թե հովիվը, թե իմաստունը, թե երկրագործը, թե երիտասարդը, թե ծերը, թե կինը: Մարդն ամբողջ կյանքում հետամուտ է երջանկության: Չնայած բոլորը ձգտում են երջանկության, սակայն աշխարհը լի է ապերջանիկներով:

Կատարյալ երջանկությունն ոչ ոք չունի. այն վերապահված է անմահներին: Երջանկությունը մեկը փնտրում է հարստության, մեկը՝ պատվի, մեկ ուրիշն էլ՝ մարմնական վայելքների մեջ: Սակայն սրանք իսկական երջանկություն չեն: Իսկական երջանկությունը պետք է փնտրել առաքինության մեջ:

Հույսը հույները և հռոմեացիները դարձրին աստված: Այդ աստվածը շատ գեղեցիկ էր՝ ձախ ձեռքին քնաբեր խաշխաշ (մեկոն) էր ու հասկ, աջ ձեռքով հենված էր սյանը: Խաշխաշը հաճույքն էր խորհրդանշում, իսկ հասկը՝ ունեցվածքը:¹² Մարդը միշտ երագում է լինել հարուստ և ապրել հաճույքների մեջ:

⁸ «Բազմավեպ», հ. 30, Վենետիկ, 1882, էջ 8:

⁹ Նույն տեղում, էջ 34:

¹⁰ Նույն տեղում, էջ 36:

¹¹ «Բազմավեպ», հ. հգ, էջ 184-185:

¹² Նույն տեղում, էջ 184:

Հույսը կարևոր է մարդու համար, այն օգնում է հաղթահարելու ձախորդությունները: Հույսն անվանում են քնի քույր, որովհետև այն ժամանակավորապես մեղմում է մարդու ցավերը:

Միսալ է կարծել, թե **առաքինությանը** բաժին են ընկնում փշերը, իսկ մոլությանը՝ ծաղիկները: Բոլոր դեպքերում չպետք է մոռանալ, որ իրական կյանքում առաքինությունն ավելի բարեբախտ է:

Խղճմտանքը նման է այն անգղին, որը կրծում էր Պրոմեթևսին:

Ճշմարտությունը մարդու հոգու միակ լեզուն է: Մարդը ամբողջ կյանքում մեծ եռանդով պետք է պաշտպանի այն:

«Բազմավեպի» ԼԸ հատորում հայր Բարսեղ Սարգիսյանը ունի մի հետաքրքիր իմաստասիրական խոսք, որը կոչել է «Թե որչափ անհրաժեշտ, կարևոր է իմաստասիրությունը դաստիարակության և կյանքի մեջ»:¹³

Հեղինակը հայ երիտասարդությանը հավաստիացնում է, թե փիլիսոփայորեն ընկալելով կրթության ու դաստիարակության կարևորությունը մարդու կյանքում, անհատը ի վիճակի է մեծ նվաճումների հասնել. «Ողջ տիեզերքը իր անբավ գանձերով քոնն է, որովհետև բանալին գտար, շտապի՛ր, մի՛ վախեցիր, լայնացրու ուսումնական ասպարեզը, մի՛ խոտորվիր դրանցից»:¹⁴ Անգլիացի փիլիսոփա Ֆրենսիս Բեկոնն է ասում.«Ինչպես թերակատար իմաստասիրությունը խոտորեցնում է կրոնից, այնպես էլ կատարյալն առաջնորդում է դեպի կրոնը»:¹⁵ Բեկոնի այս միտքը պետք է հասկանալ այն իմաստով, որ մարդը պետք է առաջնորդվի աստվածային պատվիրաններով:

Ֆրենսիս Բեկոնից բացի «Բազմավեպը» անդրադարձել է անգլիացի մանկավարժ և փիլիսոփա Ջոն Լոկի մանկավարժական հայացքներին:

Ընտիր դաստիարակության նպատակն է առողջ մարմին, ուղղախոհ միտք և առաքինի վարքագիծ: Մա ամեն մի ինտելիգենտ հայր ուղեցույց ունի իր որդուն դաստիարակելիս: Մակայն այս ճշմարտության կողքին չպետք է մոռանալ, որ երեխաները ի ծնե տարբեր են. «Այս պարագայում չենք կարող ասել, թե ամեն կանոն իր բացառությունն ունի, և ամեն անհատ իր կանոնն ունի»:¹⁶ Բոլոր լավ մարդիկ

¹³ «Բազմավեպ», հ. ԼԸ, Վենետիկ, 1880, էջ 3-16:

¹⁴ Նույն տեղում, էջ 9:

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ «Բազմավեպ», հ. ԼԱ, Վենետիկ, 1873:

առաքինի են, բայց ոչ միևնույն կերպով: Դրա համար էլ անհրաժեշտ է դաստիարակելիս հաշվի առնել մարդկանց տարբերությունը:

Որչափ ծնողները ջանան լավ ճանաչել իրենց զավակներին, այնքան դաստիարակության գործը կոյուրանա:¹⁷

Երեխայի բնավորությունը դրսևորվում է խաղերի և զբոսանքների ժամանակ: Ծնողը հենց դրանց ժամանակ էլ պետք է ճանաչի իր զավակի բնավորությունը և մշակի ճիշտ դաստիարակության ձևեր:

Որպես օրինակ մարդկությանը մեծ ծառայություն մատուցած մարդու՝ «Բազմավեպի» նույն համարում ներկայացվում է իտալացի նշանավոր կոմպոզիտոր Ռոսինին, որն իր երաժշտական հանճարով շատ արագ հայտնի դարձավ Ֆրանսիայում, Գերմանիայում և Եվրոպայի այլ երկրներում: Բերվում է գերմանացի մի մտածողի հետևյալ բնութագրականը Ռոսինիի մասին. «Նապոլեոնի մահվանից հետո գտնվեց մեկ ուրիշը, որի մասին, ինչպես նախորդի, ամեն օր խոսվում է Մոսկվայից մինչև Նեապոլ, Լոնդոնից Վիեննա, Փարիզից Կալկաթա: ...և ինքը 32 տարեկան է»:¹⁸

1870 թվականի «Բազմավեպի» մի շարք համարներում «Կարեւորութիւն բարիոք դաստիարակութեան» խորագրի տակ ներկայացվում են մանկավարժական գանազան խնդիրներ: Դրանցից մեկը քրիստոնեական կրոնը գործնականորեն սովորելու կերպն է:¹⁹

Քրիստոնեական վարդապետության համաձայն աշխարհը չարության դպրոց է, որում անբավ խորամանկ ու աչքաբաց աշակերտներ են սովորում, ուրեմն անհրաժեշտ է պատժել չարը և խղճին դեմ չգործել:

Միջնադարին հատուկ մտածողությամբ խորհուրդ է տրվում բավարարվել քչով, և այս խնդրում մեծ դեր ունի ուսուցիչ քահանան, որ աշակերտներին ճիշտ ուղու վրա պետք է դնի: Աստծու համար բոլորը հավասար են, թե հարուստ և թե աղքատ: Եթե այդպես է Աստծու, ապա նույնն է նաև մարդու համար: Չպետք է նաև տարբերություն դնել քաղաքաբնակի ու գյուղաբնակի միջև: Կյանքի բոլոր

¹⁷ Նույն տեղում, էջ 40:

¹⁸ «Բազմավեպ», Վենետիկ, 1870, էջ 100:

¹⁹ Նույն տեղում, էջ 97-100:

ճոխությունները, կավածքները, ոսկին, փառքը մնում են երկրում, միայն հոգին՝ հավատի զարդով, ներկայանում է Աստծուն:²⁰

Ահա քահանան տղային բացատրում է, թե ինչպես է անհրաժեշտ յուրացնել քրիստոնեական ուսմունքը և այն կիրառել կյանքում: Նա այդ երևույթը համեմատում է մարդու լողալ սովորելու հետ: Նախ մարդը սովորում է ջրի վրա մնալ և չսուզվել, ապա հերթով յուրացնում է լողալու գաղտնիքները:

Եթե մարդն ամբողջ էությանը քրիստոնյա է, ապա նրա միջից կվերանան գազանին հատուկ վայրագությունները, և իրական կյանքը կդառնա երանավետ դրախտ:

Կա մի ճշմարտություն, որը բազմիցս կրկնվում է «Բազմավեպի» էջերում: Այն վերաբերում է ամենատարբեր կրոններում եղած ընդհանուր դրույթներին. նույնիսկ դրանք առկա են այն դեպքում, երբ կրոնները հակոտնյա են: Դրա լավագույն ցուցիչը Աբդուլ Կատրի բարոյական խոհերն են:²¹

Այս խոհերի բաղդատումը քրիստոնեականի հետ սկսվում է առակի գրական ժանրի բնութագրականով: Չմոռանանք, որ հնում առակը, հանելուկը, ասացվածքը, առածը երբեմն կոչվում էին նույն բառով: Ներսես Շնորհալին XII դարում իր հոյակապ հանելուկները խորագրեց «Առակք վասն ուրախութեան մարդկան»: XIII դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին այդ մասին գրում է, թե քանի որ ամեն ինչում Ներսեսը հանճարեղ էր, գրեց խորհուրդ պարունակող առակներ և հանելուկներ, որպեսզի գինարբուքների ու հարսանիքների ժամանակ դրանք ասվեն առասպելների փոխարեն:²²

«Բազմավեպում» ասվում է, թե առակներն ազգերի իմաստությունն են: Ավելի շատ դրանք ազգերի ուսումնական կենդանի բանաստեղծությունն են: Առակներից կարելի է պատկերացում կազմել ազգի մտավոր զարգացման և նրա փիլիսոփայելու մակարդակի մասին:

Ֆրանսիացի գորավար Դոման (Daumas) արաբերենից թարգմանել է խորհրդածություններ, որոնք գրեթե նույնն են քրիստոնեականի հետ:

²⁰ Նույն տեղում, էջ 100:

²¹ «Բազմավեպ», հ.25, էջ 235-237:

²² Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Աշխատասիրությամբ Կ.Ա.Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 147:

Աբդուլ Կատրը ասում է, թե ճակատագիրը հինգ երկաթյա մատներ ունի: Երբ ուզում է մարդուն իր կամքի առաջ խոնարհեցնել, երկու մատը դնում է աչքերի վրա, երկուսը՝ ականջների, իսկ հինգերորդը՝ բերանին և ասում. «Լուռ մնա՛»:²³

Մեկ ուրիշ խորհրդածություն ասում է, թե մարդիկ պատրաստված են ոմանք ոսկուց, ոմանք արծաթից և մեծ մասը պղնձից: Ամեն մարդու պետք է ընդունել նրա արժեքով:

Փառասիրության մասին էլ ասվում է հետևյալը. «Երբ Աստված ուզում է մրջյունին ոչնչացնել, նրան թևեր է տալիս, ու մրջյունը լի ուրախությամբ ու գոռոզությամբ թռչում է: Այդ պահին անցնում է մի փոքրիկ թռչուն, որը կուլ է տալիս մրջյունին»:

Սիրո, բարեկամության, կանանց վերաբերյալ իմաստախոսություններով լի է արաբական միտքը: Դրանցից ամեն մեկը թվում է գոհար: Ահա օրինակներ՝ «Մերը սկսվում է մի հայացքով, ինչպես հրդեհը՝ կայծով», «Մի՛ դնիր հույսդ ոչ բախտի և ոչ կնոջ վրա, այլ անմահ Աստծու»:²⁴

Աբդուլ Կատրը հարստության ունայնության, ամուսնության սրբության մասին այնպիսի առածներ ունի, որ թվում է, թե քաղել է Սողոմոն Իմաստունի «Ժողովողից»: Այսպես, օրինակ «Հարստությունը կարող ենք կորցնել, պատիվն անցողիկ է, իսկ ճշմարիտ բարեկամները մնայուն գանձ են»:²⁵

Աբդուլ Կատրը շատ հետաքրքիր առածներ ունի մարդկանց միջև եղած բարեկամական զգացմունքների վերաբերյալ: Ահա նրա մտքերից մեկը. «Երդվում եմ Աստծու անունով, որն աշխարհի տերն է, երբեք արևը չի բարձրանա, եթե ես քո մասին չմտածեմ, և նույնը մայրամուտին, երբ շարունակ մտքիս մեջ ես: Երբ բարեկամներիս հետ եմ, շարունակ քո մասին եմ խոսում, երբ ծարավից պապակած վազում եմ ականակիտ ջրի մոտ, գավաթիս մեջ տեսնում եմ քո ստվերը»:

«Բազմավեպում» ասվում է, թե նման մտքեր կան Ջորջ Բայրոնի մոտ՝ ուղղված Թոմաս Մուրին. «Երբ չորս կողմումս միայն անապատ լինեք, և այնտեղ աղբյուր

²³ «Բազմավեպ», հ. 25, էջ 235:

²⁴ Նույն տեղում, էջ 236:

²⁵ «Ժողովող» 5:

գտնեի, և աղբյուրը մի կաթիլ ջրից ավելի չտար, և նրա կողքին շնչասպառ ընկնեի, հոգիս փչելուց առաջ քեզ համար կիսմեի այն»:²⁶

«Բազմավէպի» բարոյախոսական դասերն ինչ որ չափով նման են հայ միջնադարի փիլիսոփաների մտքերին և երկուսի նպատակն էլ նույնն է. օրինակելի մարդու կերպարով բարելավել իրական կյանքը:

²⁶ «Բազմավէպ», հ. 25, էջ 235:

Հայոց պատմության և մշակույթի ճշգրիտ դաս

*Մասնավորի շահը միշտ
հասարակության շահի մեջ է,
ով ուզում է դրանից հեռանալ,
այն կորցնում է: Ուրիշի արդարը,
բոլորի համար բարերարություն է:
Մոնտեսքյո*

«Բազմավեպի» 1881 և 1882 թվականի տարբեր համարներում լույս է տեսել Բարսեղ Սարգիսյանի «Հայ ազգն եւ իւր առ մարդկութիւնն ըրած օգուտներն» գիտական հետազոտությունը: Բարսեղ Սարգիսյանը (1852-1921) Վենետիկի Մխիթարյան միաբանության երևելի դեմքերից է:²⁷ Նա առաջիններից մեկն էր, որ մերժեց ֆրանսիացի հայագետ Օգյուստ Կարիերի այն կարծիքը, թե Մովսես Խորենացին ոչ թե V դարի, այլ VIII – IX դարերի մատենագիր է: Խորենացուն ոսկեդարի պատմիչ հիմնավորող Ալբերտ Մուշեղյանը այդ առիթով նկատում է. «Այս երկրորդ երևույթը հայ իրականության մեջ ընդունվեց խիստ քննադատաբար: Վենետիկյան Մխիթարյաններից Բարսեղ Սարգիսյանը ընդվզեց հիմնականում Խորենացուն վերագրված Մար-Աբասյան աղբյուրի «կեղծիքի» դեմ»:²⁸

Բ.Սարգիսյանն իր ծավալուն աշխատության համար բնաբան էր ընտրել Աստվածաշնչի Հին կտակարանի «Ժողովողի» հետևյալ միտքը՝ մասամբ այն փոփոխության ենթարկելով. «Մերունդ է գնում, սերունդ է գալիս, բայց երկիրը մնում է հավերժ»:²⁹

Սարգիսյանը փոխել է այս ձևակերպումը «Ժողովողի» և այն դարձրել.

Ազգ գայ, և ազգ երթայ և աշխարհս

(Հայաստան) յաւիտեան կայ:³⁰

Բեռլինի 1878 վեհաժողովը չլուծեց Արևմտյան Հայաստանի ազատագրումը թուրքական լծից,³¹ և այս պատմական տխուր փաստը խթան դարձավ, որ Վենետիկի

²⁷ Տե՛ս Ով ով է, Հայեր, Կենսագրական հանրագիտարան, հ. II, Երևան, 2007, էջ 405:

²⁸ Ա. Վ. Մուշեղյան, Մովսես Խորենացու դարը, Երևան, 2007, էջ 47:

²⁹ «Ժողովող» 1, 4:

³⁰ «Բազմավեպ», հ. ԼԹ, Վենետիկ, 1881, էջ 3:

³¹ Տե՛ս Ստ. Պալասանյան, Պատմություն Հայոց, սկզբից մինչև մեր օրերը, Թիֆլիս, 1895, էջ 764-775:

բազմազետ միաբանը հայ ժողովրդի պատմական անցյալի լուսավոր կետերով խրախույս կարդար իր ժամանակի հայ երիտասարդներին, ինչպես նաև հետագայում եկող բոլոր հայերին, թե հին ազգերից շատերն այլևս գոյություն չունեն, սակայն «Հայաստանը յաւիտեան կայ»: Այս նախաձեռնությունը խիստ ազգօգուտ է, և ավագ դպրոցի ցանկացած առարկայի ուսուցիչ այն պետք է յուրացնի ու փոխանցի իր աշակերտներին: Առավել ևս այս լուսավոր միաբանի հաղորդած փաստերը պետք է յուրացվեն հայոց պատմության, հայոց լեզվի ու գրականության ուսուցիչների կողմից: Այս է պատճառը, որ խիստ համառոտված ներկայացնելու ենք Բարսեղ Սարգիսյանի հայոց պատմության և մշակույթի դասերը:

Բ.Սարգիսյանը իր աշխատության ողջ շարադրանքի ընթացքում ներկայացնում է հայ ժողովրդի հավաքական բարոյական կերպարի լուսավոր կողմերը: Նա հայ ազգին նմանեցնում է այն տունկի հետ, որը սնվում է միայն իր հյութով, և հայերը միշտ էլ հենվել են իրենց բարոյական գործության և բնատուր գործունեության վրա:³² Սարգիսյանն տողատակում իրավացիորեն նշում է, թե հայերի ճշգրիտ պատմությունն արևմտյան պատմաբաններին հաճախ ծանոթ չէ, և հաճախ հայերի կատարած գործերը վերագրվում են պարսիկներին և մարերին: Սրանք վրիպակներ են, որոնք անհրաժեշտ է ուղղել:³³ Ահա այդ թերություններն ուղղելու նպատակն է հենց հետապնդում Բ.Սարգիսյանի ներկայացվող աշխատությունը:

Հետազոտությունը, որն անպայման քննական է և հենված է մեծ մասամբ օտար հին աղբյուրների վրա, սկսվում է հայերի նախահայր Հայկից և հայ ազգի ծագման ու կազմավորման խնդիրներից: Այս կետերում հեղինակը լիովին վստահում է նաև Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ եղած պատմական փաստերին: Նրա կարծիքով Հայաստանն առանձնանում է բոլոր ազգերի մեջ նախ երկու կարևոր փաստերով՝ ա/ այնտեղ է Աստվածաշունչը դնում առաջին մարդուն, բ/ Մեծ Հայքում է հանգրվանել Նոյը ջրհեղեղից հետո:

Բարսեղ Սարգիսյանի կարծիքով բոլոր հին ազգերի ծագումը կապվում է նախապատմական ժամանակների հետ: Եթե հույներն իրենց ծագումը կապում են

³² «Բազմավեպ», հ. ԼԹ, էջ 4:

³³ Նույն տեղում:

հողի հետ, հնդիկներն ու եգիպտացիները իրենց ծագումը կապում են երկնքի հետ, ապա հայերն իրենց սերած են համարում հաբեթածին Թորգոմին հաջորդ Հայկից:³⁴

Հետազոտողը նկատում է, որ հին ժամանակներից սկսած, եթե հայերը ստիպված են եղել գաղթել, ապա երբեք ավարառությամբ չեն զբաղվել: Ուր էլ նրանք իրենց զավակների հետ հաստատվել են, անմիջապես կառուցել են քաղաքներ ու ստեղծել մշակութային կոթողներ:³⁵

Ստեղծարար հանճարով է օժտված եղել Հայկյան Արամը, որն ըստ մարիբաայան տեղեկության կազմել է հզոր զորաբանակ՝ 50000 զինվոր ունեցող:³⁶

Բ.Սարգիսյանը իրար է ձուլում Հերոդոտոսի, Ստրաբոնի, Դիոդոր Սիկիլացու և ուրիշների հաղորդած ոչ ծավալուն փաստերը, դրանց գումարելով Ասորեստանի և Վանի սեպագիր արձանագրությունները, որոնց հիման վրա կարելի է տեսնել հնագույն ժամանակների Հայոց երկրի պատկերը:³⁷

Հետազոտողը պնդում է, թե Հայաստանն առանձին երկիր է եղել դեռևս Եգիպտոսի փարավոնների ժամանակ: Նա հայկական է համարում Նաիրի – Վանա, Մուսասիրի, Միլիտի և Ուրարտուի ու Արարատի թագավորությունները, որոնց մասին պատմում են Վանի սեպագիր արձանագրությունները:

Աշխատության Բ գլուխը վերնագրված է **«Հայ ազգի մեծագործություններն ու արվեստները նախքան Քրիստոսի XIII – IV դարերը»:**³⁸

Հին ազգերը՝ եգիպտացիները, փյունիկեցիները, եթովպացիները, ասորիները, մարերը, պարսիկները թողել են իրենց արվեստի գործերը:³⁹ Բ.Սարգիսյանը խոսում է արևելագետ Շուլցի⁴⁰ դեպի Վանի հնությունները կատարած ճամփորդության մասին:

³⁴ Նույն տեղում:

³⁵ Նույն տեղում, էջ 7:

³⁶ Նույն տեղում, էջ 10:

³⁷ Նույն տեղում, էջ 11:

³⁸ Մենք գրաբարյան ողջ հատվածները ներկայացնում ենք արևելահայերենով –Ռ.Դ.:

³⁹ Դրանք կան հատկապես Լոնդոնի Բրիտանական թանգարանում և Փարիզի Լուվր թանգարանում:

⁴⁰ Արևելագետ Շուլցի մասին Ա.Դոլուխանյանը գրում է «Գերմանացի արևելագետ և հնագետ, Գեյսենի համալսարանի պրոֆեսոր Շուլցը 1826 թվականի ամռանը բարոն Դամայի, որը դարձավ արտաքին գործերի նախարար, կարգադրությամբ մեկնում է Թուրքիա և Պարսկաստան՝ հնագիտական հետազոտություններ կատարելու նպատակով: Շուլցի ճամփորդության ներշնչողն ու կազմակերպիչը Մեն-Մարտենն էր, որը մշակել էր 4 տարի տևողությամբ գիտական ծրագիր, որի մեջ մեծ տեղ ունեին հայկական հնագույն արձանագրությունների պատճենումը և նրանց ընթերցումը: Շուլցն իր գիտական նյութերն ուղարկում էր Փարիզ ու նամակագրական կապի մեջ էր Մեն-Մարտենի հետ: Նա արդեն մեկ տարի հաղթահարելով ռուս-պարսկական պատերազմի հետևանքով այդ տարածքում առաջացած վտանգներն ու դժվարությունները՝ հասել էր բավականին հաջողությունների, 1827-ին սպանվում է

Շուլցը, որը սեպագրերի մասնագետ էր, անմիջապես հասկացավ, որ ուրարտական սեպագրերը տարբեր են մյուս հին ժողովուրդների սեպագրերից:

Այդ սեպագրերը այնքան հմուտ էին քանդակված, որ զարմանք էին պատճառում: Շուլցը անհավատալի է համարում Վանի ուրարտական շինությունների բացառիկ ամրությունը: Բ.Սարգիսյանը գրում է, թե ըստ Շուլցի վկայության՝ Լենկ Թեմուրից սկսած մինչ XIX դարը, կուսակալները փորձել են քանդել Վանի բերդի սենյակները՝ նրանցում գանձեր գտնելու հույսով, սակայն իզուր:⁴¹

Մովսես Խորենացին, որն ըստ Ստեփանոս Մալխասյանցի, տեսել է Վանի հնագույն կառույցները,⁴² դրանց ամրության և կատարելության մասին գրում է. «Իսկ քաղաքի (վերի) ծայրը և այնտեղի հրաշալի շինվածքները մարդկանց շատերին անհասկանալի են մնում և պատմելու հնարավորություն չկա: Այդտեղ գագաթի շուրջը պարիսպ քաշելով՝ ներսը շինում է դժվար դուրս գալու ինչ-որ ծածուկ և ահռելի արքայանիստ շինվածքներ: Դրանց շինության որպիսությունը մենք ոչ ոքից ճշտությամբ չենք լսել, ուստի հարմար չենք դատում մեր պատմության մեջ հյուսել. այսքան կասենք, թե ինչպես լսել ենք, սրանք բոլոր թագավորական գործերի մեջ առաջին և վեհագույն են համարվում»:⁴³

Խորենացին Վանի շինությունները կապում է Շամիրամի հետ, իսկ Բ.Սարգիսյանը չի ընդունում այդ տեսակետը և գրում է, թե արդի քննադատության վրա հիմնվելով պատասխանում է. «Դրանք հայ հանճարի արգասիք են և ոչ թե ասորեստանցիների: Նա հիշեցնում է, թե ըստ մարաբասյան պատմության՝ Վանա ծովակի մոտ ապրում էր Հայկի թոռ Կադմոսը՝ Արամանյակի որդին: Բացի այդ, Հայկի և Բելի կոնիվը տեղի է ունեցել Վանա լճի մոտերքում: Այդ մասին վկայում է նաև Գարեգին Սրվանձտյանցի «Գրոց ու բրոցում» տպագրված ավանդագրույցը:⁴⁴

Մովսես Խորենացին գրում է. «Այս ժամանակ ուշիմ և խոհեմ հսկան, խիստ զանգուր մազերով, վառվռուն աչքերով, շտապով հավաքում է իր որդիներին և

բրդերի ձեռքով» (տե՛ս Ա.Դուլվիսանյան, Մեն-Մարտենը ֆրանսիական հայագիտության հիմնադիր, Երևան, 2014, էջ 122):

⁴¹ «Բազմավէպ», հ.ԼԹ, էջ 16:

⁴² Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը և մեկնաբանությունները Ստ.Մալխասյանի, Երևան, 1981, էջ 468:

⁴³ Նույն տեղում, էջ 67:

⁴⁴ Գ.Սրվանձտյանց, Երկեր, հ.1, Երևան, 1978, էջ 50:

թոռներին, քաջ և աղեղնավոր մարդկանց, թվով շատ նվազ, և ուշիմ մարդկանց, որ ձեռքի տակ ուներ, գնում հասնում է մի ծովակի ափ, որի ջրերն աղի են և մանր ձկներ են պարունակում»:⁴⁵ Ստեփանոս Մալխասյանն էլ այս ծովակի համար դրել է հետևյալ ծանոթագրությունը. «Վանա լիճն է իր համբավավոր տառեխ ձկով»:⁴⁶

Բ.Սարգիսյանը բազմաթիվ և տարալեզու աղբյուրների վրա հիմնվելով ապացուցում է, թե Արարատի երկիրն ու Ուրարտուն նույն ինքը Հայաստանն է:

Աշխատության Գ գլուխը կոչվում է.«**Հույների տասը հազարի նահանջը: Մուտքը Հայաստան: Հայերի մարդասիրությունը: Հայաստանի գյուղատնտեսության և անասնաբուծության ոսկեդար: Հայ ազգի ազդեցությունը իրեն սահմանակից՝ մանավանդ հյուսիսային ազգերի վրա**»:

Այս հոդվածում մեծ տեղ է տրվում հույն պատմիչ Քսենոփոնի «Անաբասիս» աշխատությանը, որում նկարագրված է հունական 10000 զինվորներից բաղկացած զորքի նահանջը, որ ընթանում է Հայաստանով: « Անաբասիսն» ունի պատմական մեծ արժեք, որովհետև այն ականատեսի գործ է: Հայաստանում կատարված դեպքերը տեղի են ունեցել Ք.ժ.ա. 401թվականին:

Որևէ տեղ տեսնված չէ, որ հեթանոսական ժամանակներում այդպիսի հյուրընկալություն լինի օտար զորքին: «Անաբասիսը» հունարենից հայերեն է թարգմանել Միմոն Կրկյաշարյանը, նա նշում է. «Անաբասիս» (հայ գրականության մեջ «Նահանջ բիրուն») Քսենոփոնի գլուխգործոցն է որպես ն՝ պատմական աղբյուր, և՛ գրական-գեղարվեստական երկ»:⁴⁷

Նահանջող հունական զորքը որոշում է Հունաստան վերադառնալ Արմենիայով: Քսենոփոնը նկարագրում է Ք.ժ.ա. V դարում ապրած հայի կենցաղը, հյուրասեր լինելը, առատության մեջ ապրելը: Նա գրում է. «Տներն այնտեղ գետնափոր էին, մուտքը ինչպես ջրհորի բերան, իսկ ներքևի մասը ընդարձակ: Մինչդեռ անասունների համար մուտքը փորված էր [հողի մեջ], մարդիկ ցած էին իջնում աստիճաններով: Տներում կային այծեր, ոչխարներ, եզներ, հավեր և սրանց ձագերը: Բոլոր անասունները ներսում կերակրվում էին խոտով: Այնտեղ կար նաև ցորեն և գարի և ընդդեմ և կրատերների մեջ գարուց պատրաստված գինի, որի երեսին լողում

⁴⁵ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, էջ 43:

⁴⁶ Նույն տեղում, էջ 466:

⁴⁷ Քսենոփոն, Անաբասիս, Թարգմանությունը Միմոն Կրկյաշարյանի, Երևան, 1970, էջ 207:

Էին գարու հատիկներ, կրատերների մեջ կային եղեգներ՝ մեծ և փոքր, առանց ծնկի: Ծարավելու դեպքում մարդ պետք է այդ եղեգի ծայրը բերանին դնէր ու ծծէր: Եվ այն շատ թունդ էր, եթէ ջուր չխառնէին, իսկ սովոր մարդու համար շատ ախորժելի ըմպելիք էր»:⁴⁸

Քսենոփոնը ներկայացնում է նաև հայերի շոայլ հյուրասիրությունը. «...Գնում էր գյուղերում եղողների մոտ և ամենուրեք նրանց գտնում էր կերուխումի և ուրախության մեջ, և ոչ մի տեղ նրան բաց չթողեցին, մինչև ճաշ չմատուցեցին: Չկար մի տեղ, որ սեղանին միաժամանակ չդնէին գառան, ուլի, խոզի, հորթի և հավի միս, մեծ **քանակա**ությամբ ցորենի ու գարու հացի հետ: Ու եթէ որևէ մեկը մտերմաբար ցանկանում էր խմել մյուսի կենացը, ապա նրան քարշ էր տալիս կրատերի մոտ և կռանալով այնտեղից պետք է խմեր՝ եզան նման ծծելով»:⁴⁹

«Անաբասիս» գրքի վերջում դրված է նշանավոր խորենացիագետ Գագիկ Սարգսյանի գնահատականը՝ տրված հույն պատմիչի երկին. «Սակայն երկի մանրագնին ուսումնասիրությունը ի վերջո հանգեցրել է այն միահամուռ տեսակետին, որ հակառակ Քսենոփոնի իր սեփական դերի գերագնահատման՝ «Անաբասիսի» պատմական կտավը ոչ միայն ճշմարտացի, այլև վերին աստիճանի ճշգրիտ է դուրս գալիս բոլոր այն դեպքերում, երբ հնարավոր է լինում ստուգել նրա տվյալները: Քննողները եկել են այն եզրակացության, որ Քսենոփոնը արշավանքի ողջ ընթացքում օրագիր է վարել, որը և օգտագործել է հետագայում «Անաբասիսը» շարադրելիս»:⁵⁰

Հետազոտության մեջ Բ.Սարգիսյանը թվարկում է բազմաթիվ հին պատմիչների, ինչպես նաև XIX դարի եվրոպացի ճանապարհորդների կարծիքները, որոնք պնդում են, թե Հայաստանը հնագույն քաղաքակրթության կրողն է:

Երկրաբան ու հնագետ Աբիխի կարծիքով վերջին տարիների աշխարհագրական հետազոտումներն ապացուցում են Հնգամատյանի պատմական վկայությունը, թե Ծննդոց գրքում եղած չորս գետերը, ուր գետեղված էր դրախտը,

⁴⁸ Նույն տեղում, էջ 97:

⁴⁹ Նույն տեղում, էջ 98:

⁵⁰ Նույն տեղում, էջ 215:

Հայաստանում էին: Այդ գետերն են՝ Տիգրիս, Եփրատ, Երասխա (Գեհոն) և Փասիս (Ճորոխ):⁵¹

Բ.Սարգիսյանը **պնդում**, թե Տիգրան Երվանդյանի ժամանակ Հայաստանում խիստ զարգացած էին երկրագործությունն ու անասնաբուծությունը: Այդ նույն ժամանակահատվածում Հայաստանին սահմանակից ազգերը հայերից հետամնաց էին: Նա հավատ է ընծայում այն խոսքերին, թե Տիգրան Առաջինի ժամանակ բոլորն ապրում էին «յուղով ու մեղրով»:

Արշակունիների և Բագրատունիների ժամանակ Մեծ Հայքը ապրել է ծաղկուն կյանքով: Նկատենք, որ Ղազար Փարպեցին, որին մասնագետները համարում են ճշմարտապատում պատմիչ, ոսկեդարի հայ կյանքը ներկայացնում է որպես ծաղկուն ու կենսահաստատ իրողություն: Ըստ որում ջերմություն է տեսնում շինականների և նախարարների փոխհարաբերություններում: Այդ իրողության մասին խոսում է, երբ նկարագրում է Արարատյան դաշտը: Արժե այստեղ ընդարձակ մեջբերում կատարել, որպեսզի հասկացվի Բ.Սարգիսյանի եզրահանգումը. «Իսկ ամեն ինչով լի դաշտերն աշխատավորներին, ասես հմայիչ խոսքով, դեպի իրենց են քաշում և նրանց լիացնում ինչ-որ բարիքով, առավել փութացնում վերջնական դարձը դեպի իրենց: Նրանք ո՛չ միայն տեսանելիով են ցույց տալիս իրենց շահավետությունն ու օգտակարությունը մարդկանց, այլև հմտորեն խուզարկող աշխատավորներին ցույց են տալիս երկրի տակ ծածկված գանձերը, որպեսզի նրանք հավաքեն ի շահ իրենց, ի վայելումն այս աշխարհի թագավորական մեծությունների և ի հաստատություն հարկահանների: Եվ այդ գանձերն են ոսկին ու պղինձը, երկաթն ու պատվական քարերը, որոնք ընկնելով արհեստավորների ձեռքը, թագավորներին զուգում են խույրերի, թագերի ու հանդերձների վրա ընդելուզված ոսկեհուռ պաճուճանքները»:⁵²

Այնուհետև Ղազար Փարպեցին նկարագրում է, թե ինչ սիրով շինականների երեխաները իրենց որսած ձկները, վայրի թռչունների ձվերը նվիրում էին

⁵¹ «Բազմավեպ», հ.ԼԹ, էջ 23: Աստվածաշնչի Հին կտակարանում կարդում ենք. «Գետ էր բխում Եդեմից, որպեսզի ոռոգեր դրախտը և այնտեղից բաժանվում էր ճյուղերի: Մեկի անունը Փիսոն էր: ... Երկրորդ գետի անունը Գեհոն է: ... Երրորդ գետը Տիգրիսն է: Սա հոսում է դեպի Ասորեստան: Չորրորդ գետը Եփրատն է: (Տե՛ս Ծննդոց, 2, 10-14):

⁵² Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Թուրք Վահան Մամիկոնյանին, Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները, Բագրատ Ուլուբաբյանի, Երևան, 1982, էջ 23:

նախարարներին. «Իսկ նախարարները, ընծաների մասն ընդունելով հոժարությամբ, իրենք էլ նրանց էին առավել շատ պարզում իրենց ունեցվածքներից»:⁵³

Բագրատունիների ժամանակ Հայաստանն այնքան զարգացած էր, որ նրա պալատականներից Գրիգոր Մագիստրոս **Պահլավունին, բազմալեզու** և բազմագիտակ գորական էր, իսկ Բագրատունիների մայրաքաղաք Անին «Տիեզերահոչակ քաղաք» էր: Բավական է տեսնել Անի մայրաքաղաքի հզոր պարիսպները, եկեղեցիների ավերակները, հասկանալու համար, թե 100-ամյա խաղաղ կյանքը ինչպես է զարգացրել Հայաստանի տնտեսությունը, գիտությունն ու մշակույթը:

Ահա թե ինչպես է Բագրատունիների ծաղկուն կյանքը պատկերում ժամանակի ակնաստես պատմիչ Արիստակես Լաստիվերցին (11-րդ դար). «Կար ժամանակ, որ այս երկիրը ճանապարհորդների դեմ բացվում էր իբրև տնկախիտ, կանաչազարդ, տերևալից, պտղաբեր, գեղաշուք ու երջանիկ մի դրախտ, քանզի իշխանները զվարթատես դեմքով բազմում էին գահին, իսկ նրանց առջև, զարնանաբեր երփնավառ ծաղկանոցների նման երգ ու զրույցների հանդես էին միայն լինում, ուր փողերի ու ծնծղաների և այլ երգարվեստների ձայները մարդկանց սիրտն ու հոգին համակում էին ուրախությամբ ու բերկրանքով, այնտեղ նստում էին նաև ծերերը, պատվական և փառահեղ ալիքներով զարդարված, իսկ մայրերը մանուկներին գիրկն առած, մայրական գթով տոչորուն, անհուն բերկրանքից մոռանալով երկունքի ցավերի տխուր ժամանակը՝ աղավնիների նման իրենց նորափետուր ձագուկներով էին միշտ հրճվում»:⁵⁴

Բ.Սարգիսյանի կարծիքով հայ ժողովրդի նման գործունեությունը տնտեսության բնագավառում ազդել է հատկապես հյուսիսային ժողովուրդների վրա: Այս գործունեությունն էլ պայմանավորել է նաև հայ վաճառականության զարգացումը:

Աշխատության Դ գլուխը կոչվում է՝ **«Առևտուրը և Հայաստանի վաճառականությունը: Նավարկելի և ցամաքային ճանապարհը: Նավահանգիստները: Հայ ազգի ազդեցությունը իրեն սահմանակից, մանավանդ հյուսիսային ժողովուրդների վրա»:**

⁵³ Նույն տեղում, էջ 25:

⁵⁴ Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, Թարգմանությունը Վ.Ա.Գևորգյանի, Երևան, 1971, էջ 33:

Հեղինակի կարծիքով Հայաստանը Արտաշես Ա-ի և Տիգրան Մեծի օրերին ռազմական գործերից ավելի մարդասիրություն և ճիշտ քաղաքականություն ծավալեց:

Ըստ օտար մատենագիրների՝ Հայաստանը հնագույն օրերին արտահանում էր մորթիներ, պղնձի ու երկաթի անոթներ, զենքեր, կտավներ, գորգեր, բրդեղեն, մետաքս, արջառ, ոչխար, այծ, ձիեր, ջորիներ, աղ դրած ձուկ, պտուղներ, ներկերի և դեղերի արմատներ, գազպե, որդան կարմիր, աղ, կարագ, պանիր, գարի, ցորեն, խոտ, 300-ից ավելի ընդեղեն, կտավատի և նուշի յուղ, կապար, երկաթ, պղինձ, արծաթ, օձաքար, բյուրեղ քար, հանքային ջրեր և այլ ապրանքներ:⁵⁵

Արարատյան և Ասքանազյան տիրապետության ժամանակ, ըստ հրեական աղբյուրների և Հերոդոտոսի, Հայաստանն առաջնային դեր ուներ քաղաքակիրթ աշխարհում: Հետագոտողի կարծիքով դեռ Հրեաստանի Սողոմոն արքայի օրերին հայ վաճառականները լայն գործունեություն են ծավալել:

Նիկոլայ Ռերիխի կարծիքով. «Այսպես էլ դարեր շարունակ Արևելքի ժողովուրդները Սողոմոն արքայի անվան հետ են կապում անսովորն ու անհավանականը»:⁵⁶

Սողոմոն արքան շատ հին ժամանակներից մտել է հայ ժողովրդի մտածողության մեջ, այս իրողությունն իր արտացոլումն է գտել թե՛ ժողովրդական բանահյուսության և թե՛ հայ մատենագրության մեջ:

Հայկական հին գինիները վաճառականները հասցնում էին հեռու երկրներ: Այդ մասին վկայում են Հերոդոտոսը, Քսենոփոնը, Պլինոսը, Ստրաբոնը, Մովսես Խորենացին և Ղ.Փարպեցին:⁵⁷

Դիոդորոս Սիկիլացին վկայում է, թե՛ հայերը նավերով մարմար քարը տանում էին օտար երկրներ: Նինվեի և Բաբելոնի հրաշակերտ կառույցները շինված էին Հայաստանի քարերով:

Բ.Սարգիսյանը նշում է բազմաթիվ կիսաթանկարժեք և թանկարժեք քարերի անուններ, որոնք հայտնի են եղել Արևելքի տիրակալներին հայերի շնորհիվ: Հայ վաճառականները Ասորեստանում էժան գնով ձեռք էին բերում գեղեցիկ գորգեր և

⁵⁵ «Բազմավեպ» հ. ԼԹ, էջ 93:

⁵⁶ Ն.Ռերիխ, Հեքիաթներ, Թարգմանությունը ռուսերենից՝ Սուրեն Դավթյանի, Երևան, 2016, էջ 30:

⁵⁷ «Բազմավեպ», հ. ԼԹ, էջ 105:

տանում էին Բակտրիա ու Էկրատան՝ թագավորական պալատները զարդարելու: Հայ վաճառականները հասնում էին մինչև Չինաստան և Հռոմը կապում էին Չինաստանի հետ: Հատկապես հայ վաճառականները պատվական գործունեություն ծավալեցին Տիգրան Մեծի և Միհրդատ Պոնտացու ժամանակներում:

Որպեսզի հայ վաճառականների դերի կարևորությունը շեշտի, Բ.Սարգիսյանը հիշեցնում է Քսենոփոնի «Անաբասիսի» այն վկայությունը, թե ինքը հայերի տներում տեսավ շատ հարուստ տնական ու երկրագործական կահկարասիներ, որպիսիք բնավ որևէ տեղ չէր տեսել:

Աշխատության Ե գլուխը նվիրված է Հայաստանում քրիստոնեության մուտքին, Մաշտոցյան այբուբենին և հինգերորդ կամ ոսկեդարյան դպրությանը:

Այս հատվածն սկսվում է Տիգրան Մեծի գործունեության փառաբանմամբ: Հավանաբար Տիգրան Մեծի կերպարն ամենից ճիշտ գնահատել է Ֆրանսիայի ակադեմիայի անդամ Ռընե Գյուսեն, որը 1946-ին ֆրանսերենով լույս տեսած Ն.Ադոնցի «Քննական պատմություն Հայոց» աշխատության առաջաբանում գրում է. «Տիգրանը իր ժողովրդի ապրելու իրավունքն ապահովեց հավիտենականության համար»:⁵⁸

Բ.Սարգիսյանի կարծիքով, ըստ Ագաթանգեղոսի, Գրիգոր Լուսավորչի և Տրդատ Մեծի ժամանակ քրիստոնեական դպրությունը սկսեց զարգանալ Հայաստանում: Նրա տեսակետով մինչ այդ հայերն արդեն ունեին գրեր, որովհետև հռչականուն Փիլոստրատոսը գրում է, թե Պամփյուլիայում մի հովազ են բռնել, որի վզին ոսկյա վզնոց կար և հայատառ գրված էր «Թագաւոր Արշակ աստուածոյն Նիգիայ»:⁵⁹

Հետագոտողը առեղծված է համարում այն իրողությունը, ըստ որի, եթե հայերը չունեին սեփական գիրը, ապա V դարում, շատ կարճ ժամանակահատվածում, ինչպես ծաղկեց հարուստ հայ դպրությունը և հասավ կատարելության: Նրա կարծիքով ոսկեդարում հայերն արագորեն թարգմանեցին հույների և ասորիների բոլոր կարևոր գործերը, որոնք ստեղծվել էին քրիստոնեության առաջին դարից մինչև վեցերորդ դարը:

⁵⁸ Ն.Ադոնց, Երկեր հինգ հատորով, Դ, Քննական պատմություն Հայոց, Երևան, 2009, էջ 29:

⁵⁹ «Բագմավէպ», հ. ԼԹ, էջ 207:

Բ.Սարգիսյանը թվարկում է հին աշխարհի այն հեղինակների անունները և գործերը, որոնց բնագրերը կորած են, և դրանք կան միայն գրաբարով. «Փիլոն, Սներիանոս, Ոսկեբերանի Մեկնություն Մատթեի, նույնի Հորն Մեկնություն Եսայեայ և ներբողեան ի Ս.Գրիգոր Լուսավորիչ, Ս.Եփրեմի Համաբարբառ Աւետարանաց, Պողոսի թղթոց և առ Կորնթացիս երրորդ անհարազատ թղթոյն մեկնությունը, Արիստիդէս իմաստասիրին առ Ադրիանոս կայսր և ի Գոչումն աւագակին ճառերն, Անսիգք Անտիոքայ»:⁶⁰ Այդ է պատճառը, որ հայագետ Վիլլֆրուան շատ բարձր է գնահատում հայ հին թարգմանիչներին, որոնք հույների և ասորիների հանճարեղ և իմաստուն գործերը թարգմանելով հայտնի դարձրին իրենց հայրենիքը:

Հետազոտության Զ գլուխը նվիրված է հայ Արշակունիներին, նրանց և հույների, նրանց և պարսիկների միջև ունեցած հարաբերություններին և Արշակունիների տերության անկմանը:

Հայաստանը ունեցել է շատ հերոսական էջեր, որոնց մասին պատմում են հատկապես Եղիշեն և Ղազար Փարպեցին: Հայաստանը և հարավից և հյուսիսից իր վրա է վերցրել բարբարոս ցեղերի հարձակումները՝ նրանցից փրկելով հին քաղաքակիր աշխարհը:

Բ.Սարգիսյանը Է գլխում պատմում է Հայաստանի մարզպանության և արաբական ոստիկանների լծի տակ եղած ժամանակահատվածի մասին: Հայագի բյուզանդական կայսրերը: Բագրատունիների թագավորությունը: Բարբարոսների արշավանքները: Հայերը գաղթում են օտար երկրներ:

Բարսեղ Սարգիսյանը համոզված է, թե 451թվականի Ավարայրի ճակատամարտում Վարդան Մամիկոնյանը կվերականգներ հայոց թագավորությունը, եթե մարզպան Վասակ Սյունեցին ուխտադրուժ չլիներ: Վարդանը 66000 զորքի փոխարեն կունենար 300000 զորք: Սակայն Մամիկոնյան մանուկ Վահանը, որը տեղյակ էր Ավարայրի դեպքերին, նոր ապստամբությամբ հաղթում է պարսիկներին և իր ձեռքն է վերցնում Հայոց մարզպանությունը:

Հայաստանն իր պետականությունը վերականգնում է Բագրատունիների շնորհիվ: Հետազոտողը տողատակում տեղեկացնում է, թե Էլիզե Բրկյուն իր նոր գրքում «Nouvelle géographie universelle» («Նոր ընդհանրական աշխարհագրություն»)

⁶⁰ Նույն տեղում, էջ 209:

ասում է, թե Հայոց ամենափառավոր թագավորությունը Բագրատունյաց ժամանակն էր:⁶¹

885 թվականին Աշոտ Ա Բագրատունին վերականգնեց Հայոց թագավորությունը: Ավելին նա ճանաչվել է նաև Վրաց ու Աղվանից թագավոր: Նրան ենթարկվել են նաև արաբական ամիրայությունները:⁶²

Բագրատունիների օրոք Հայաստանում ծաղկում են բարեկեցիկ քաղաքներ՝ Դվին, Անի, Բաղեշ, Արծն: Այդ քաղաքներում ծաղկեցին արհեստները, առևտուրը, արվեստները և դպրոցները:

Հետագոտողը ներկայացնում է, թե որ Բյուզանդական կայսրերն են եղել հայազգի: Դրանցից առաջինը Մորիկն է (582-602), հետո գալիս են ՄԺԺ Գնունին (667-668), Վասիլ Ա Արշակունի (867-886), Լևոն Զ Իմաստասեր (886-912), Հովհաննես Ա Չմշկիկ (969-976), Վասիլ Բ-ն, որը Մակեդոնական հայկական դինաստիայից էր (976-1025): Վասիլ Երկրորդը հայտնի է նրանով, որ նրա նախաձեռնությամբ Ռուսաստանի մեծ իշխան Վլադիմիրը 988-ին երկիրը դարձրեց քրիստոնյա:

Վասիլ Երկրորդը իր եղբոր դստերը՝ Աննային, ամուսնացրեց Վլադիմիրի, միաժամանակ իր եղբայր Կոստանդինի հետ «պտտեցին բյուզանդական կայսրության բախտի անիվը»:⁶³

Հետագոտողը եզրակացնում է, թե հայազգի կայսրերը 212 տարի կառավարեցին բյուզանդական պետությունը, որի կազմում հույներից բացի կային բազմաթիվ այլ ազգեր:

Նշանավոր բյուզանդագետ և հայագետ Նիկողայոս Ադոնցը բազմաթիվ աշխատություններ է նվիրել հայերի բյուզանդական կայսրության մեջ ունեցած դերին: Դրանց մեջ մեկը կոչվում է «Հայ գիտական դեմքեր Բյուզանդիայում»:

Ն.Ադոնցը գրում է.«Իններորդ դարը շատ նշանավոր շրջան է Բյուզանդիայի պատմության մեջ: Դարավոր թմրությունից հետո վերջապես սթափվեց գիտական միտքը և հին, մոռացված գիտությունները երևան եկան, թափ տալով իրենցից անտարբերության փոշին:

⁶¹ Նույն տեղում, էջ 7:

⁶² Ով ով է, Հայեր, Կենսագրական հանրագիտարան, հ. I, Երևան, 2005, էջ 106:

⁶³ «Բազմավեպ», Հ. Խ, Վենետիկ, 1882, էջ 9-10:

Այս մեծ գործում ևս, ինչպես քաղաքական ասպարեզում, կարապետող ուժերը հայ արյուն ունեին: Նրանց ենք պարտական, նրանց նախաձեռնող ոգուն և մտավոր կարողության՝ գիտությանց հառնումը Բյուզանդիայում»:⁶⁴

Ներկայացնելով հայերի դերը օտար երկրները զարգացնելու գործում Բ.Սարգիսյանը հիշում է այս առածը. «Հայերը օտար ազգերի լավ և հավատարիմ ծառաներն են, իսկ իրենց հողի վրա՝ վատ տնտեսներ»:

Հետազոտության Ը գլուխը նվիրված է Կիլիկիայում հայոց թագավորության հաստատմանը: Երևելի իշխաններին, խաչակիրներին: Հայոց վաճառականության ազդեցությանը արևմուտքի երկրների առևտրի վրա: Հայկական արվեստի տարածմանը:

Կիլիկիայի պատմության քաջ գիտակ Կլոդ Մութաֆյանը Կիլիկիայի հայոց թագավորության պատմությունը ճշգրիտ պատկերացնելու համար գրում է.«Աշխարհի քիչ շրջաններ ունեն այդքան հարուստ անցյալ: Մի շարք աշխարհագրական պատճառներով՝ Կիլիկիան շփման արտակարգ կետ է եղել եվրոպական և ասիական քաղաքակրթությունների միջև: Եվրասիայի գրեթե բոլոր քոչվոր ժողովուրդները, սկսած արևմուտքում ձևավորված նորմաններից և վերջացրած արևելքից եկած մոնղոլներով, անցել են Կիպրոս կղզու դեմ-հանդիման գտնվող, Միջերկրական ծովի հյուսիս-արևելքում ծվարած այդ փոքր եռանկյան վրայով»:⁶⁵

Կիլիկյան հայկական թագավորությունը, որը հաստատվեց 1080 թվականին, չորրորդ հայկական մեծ թագավորությունն էր: Ինչպես վկայում են նշանավոր հայագետներ Վ.Լանգլուան և Էդ.Դյուլորիեն, հայերը թեև զինվորական թվով փոքր, կարողացան հաղթել հույներին և հիմնել իրենց նոր թագավորությունը: Դա յուրօրինակ վրեժ էր հույների կողմից Անիի խաբեությամբ ձեռք բերելուն և Գագիկ Երկրորդին սպանելուն:⁶⁶

⁶⁴ Ն.Ադոնց, Երկեր հինգ հատորով, Ե, Հայ-բյուզանդական ուսումնասիրություններ, Երևան, 2012, էջ 48:

⁶⁵ Վ.Մութաֆյան, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Երևան, 2004, էջ 3:

⁶⁶ «Բազմավեպ», հ. Խ, էջ 16: Կիլիկիան Հայաստանի կայացման և նրա թագավորության մեջ Մեծ Հայքը ներառելու պատմական դեպքերի մասին ճշգրիտ պատկերացում կազմելու համար հայ գրականության ուսուցիչներին խորհուրդ կտայինք կարդալ Միքայել Շաթիրյանի «Արծաթե դար» հիանալի վեպի երկու հատորները (Տե՛ս Մ.Շաթիրյան, Արծաթե դար, Երևան, 2016):

Երբ 1189 թվականին Երուսաղեմի քրիստոնեական թագավորությունն ընկավ Սալահադինի հրոսակների հարվածներով, Կիլիկիայի Հայոց թագավորության վիճակը ավելի խոցելի դարձավ:

Երբ 1098 թվականին առաջին անգամ խաչակիրները Փոքր Հայաստանի օգնությամբ տիրեցին Ասորեստանին և Պաղեստինին, Վենետիկի, Ճենովայի, Պիզայի հանրապետությունների նավերը սկսեցին առաջին առևտրական հարաբերությունները Կիլիկյան Հայաստանի վաճառականների հետ, մանավանդ, երբ 1111 թվականին Վենետիկի նավատորմը միջազգային արտոնություն ստացավ Միջերկրական ծովում ազատ նավարկելու համար: Պատմությունից հայտնի է, որ Արևմտյան երկրները կենտրոնացան Կիլիկյան Հայաստանի վրա և հայ վաճառականներին տվեցին առևտրական արտոնություններ, որոնք զարգացրին առևտուրը Եգիպտոսից մինչև Հնդկաստան: Անշուշտ հայ թագավորներն էլ իրենց հրովարտականերով արտոնություններ շնորհեցին ֆրանսիացիներին, գերմանացիներին, իսպանացիներին, անգլիացիներին:

Անիի անկումից և Կիլիկիայի հայկական թագավորության վերանալուց հետո աշխարհի տարբեր երկրներում հայերը հիմնեցին իրենց գաղթօջախները և սկսվեց հայ ազգի գործունեության բոլորովին նոր շրջանը: Ահա այս խնդիրներին է նվիրված հետազոտության Թ գլուխը, որի հիմնական վերնագիրն է **«Հայ գաղթականության երրորդ շրջանը»:**

Բ.Սարգիսյանի կարծիքով հայ գաղթօջախները աշխարհի ցանկացած երկրում նպաստել են տվյալ երկրի առաջադիմությանը: Նա մանրամասն նկարագրում է, թե ինչ կարևոր գործեր են կատարել հայերը Պարսկաստանում, Հնդկաստանում, Եգիպտոսում: Նրանք այդ երկրներում դարձել են դեսպաններ, հայտնի գորահրամանատարներ, պետական պաշտոնյաներ:

Հետազոտության այս գլուխն ավարտվում է Ռուսաստանում հայերի ունեցած կարևոր դերով: Ըստ ռուս նշանավոր պատմիչ Կարամզինի՝ Վլադիմիր Մոնամախի թագավորության ժամանակ մեծ թվով հայ գաղթականներ կային Կիևում, ուր կառուցել էին քարաշեն եկեղեցի: Այդ ժամանակահատվածում ռուսական արքունիքի

ամենահմուտ բժիշկները հայեր էին: ⁶⁷ Հայերը գաղթօջախներ հաստատեցին Կազանում և հատկապես Աստրախանում:

Նրանք վաղուց հաստատվել էին Ղրիմում:

Ալեքսեյ Միխայլովիչ և Պետրոս Մեծ ցարերը, ինչպես նաև Եկատերինա Երկրորդ կայսրուհին տարբեր հրովարտակներով մեծ արտոնություններ են տվել հայերին: Հայերն առաջինը Ռուսաստանում հիմնեցին մետաքսագործությունը, սովորեցրին օղի թորելու ճիշտ ձևերը, զանազան պողատու ծառեր խնամելու միջոցները:

Մոլդավիայում և Լեհաստանում հաստատվեցին մեծ թվով հայեր: Նրանք Լեհաստանում այնքան ազդեցիկ դարձան, որ Լեհաստանի թագավորները նրանց մեծ արտոնություններ տվեցին: Այնտեղ հայերը բացեցին ուսումնարաններ, կառուցեցին եկեղեցիներ, հիմնեցին սեփական դատարանները: Հայերը հաստատվեցին Իտալիայի, Ֆրանսիայի, Անգլիայի տարբեր քաղաքներում: Հայերի կրթված ազգ լինելու պերճախոս վկայությունը այն բազմաթիվ տպարաններն են, որ նրանք հիմնեցին աշխարհի տարբեր քաղաքներում. «Վենետիկի հայերն առաջինը եղան, որ 1565-ին հիմնեցին իրենց տպարանը: 1567-ին տպարան բացեցին Կ.Պոլսում, 1584-ին՝ Հռոմում, 1616-ին՝ Լեմբերգում, 1624-ին՝ Մեդոլիայում, 1633-ին՝ Փարիզում, 1640-ին՝ Նոր Ջուդայում, 1660-ին՝ Ամստերդամում, 1673-ին՝ Մարսելում, 1680-ին՝ Լայպցիգում, 1690-ին՝ Պատովիոյում, 1719-ին՝ Կակաթայում և Մադրասում, 1780-ին՝ Ս.Պետերբուրգում, 1790-ին՝ Նոր Նախիջևանում, 1790-ին՝ Աստրախանում»:⁶⁸

Բարսեղ Սարգիսյանի աշխատասիրությունն ավարտվում է Ժ գլխով: ⁶⁹ **Այս գլուխը կոչվում է՝ «Հայերը ներկա՝ տասնիններորդ դարի շրջանի մեջ»:**

Այս հատվածում վերստին հետազոտողը հարց է տալիս, թե ո՞ր են հին հնդիկները, **եգիպտացիները**, էլամցիները, քաղդեացիները, մարերը, ասորեստանցիները, բաբելոնացիները, նրանք բոլորն էլ չկան: Սակայն կան հայերը, որոնց զարմանալի հարատևության բուն գաղտնիքը **հայտնի չի**: Բ.Սարգիսյանը դնում է սեփական հիմնավորումները՝

ա/ Հայոց լեզուն իր սեփական հատկություններով:

⁶⁷ «Բազմավեպ», հ. Խ, էջ 299:

⁶⁸ Նույն տեղում, էջ 305:

⁶⁹ «Բազմավեպ», հ. ԽԱ, Վենետիկ, 1885, էջ 30-36:

բ/ Սեփական ավանդություններն ունենալը և դրանք ուրիշներից չվերցնելը:

գ/ Ազգային սեփական ծեսերն ու արարողություններն ունենալն ու դրանք պահելը թե սեփական հողի վրա և թե օտարության մեջ:

դ/ Ճկուն լինելը բոլոր հանգամանքներում: Օտարի լծի տակ կռանալուց հետո շտկվել կարողանալը և դարձյալ պետականություն ստեղծելը:

ե/ Լեռների և բարեխառն գոտու բնակիչ լինելով՝ հայն ամեն պայմաններում ստեղծում է իր սերունդը:

զ/ Հայրենասիրությունը, մշտապես իր հայրենիքի կարոտը զգալը, հայրերի հողին կարոտելը:⁷⁰

Հետագոտողը XIX դարում հայերին տեղաբաշխված է տեսնում վեց երկրների մեջ՝ Թուրքիա, Ռուսաստան, Պարսկաստան, Ավստրիա, Անգլիա, Հոլանդիա:

Օտարության մեջ էլ հայի գլուխը այրվել է մտավոր հոգսերով, իսկ սիրտը՝ ազատասիրական գաղափարներով: Հետաքրքիր օրինակը Բ.Սարգիսյանը բերում է Ղարաբաղի հայերի վարքագծից: Նրանք միշտ եղել են մտավոր առաջխաղացման և անձնական արիության մեջ:

Երբ Արևելյան Հայաստանը մտավ ռուսական կայսրության մեջ (1828թ.), ռուսական ցարերը մեծ համակրանք ցուցաբերեցին հայերի նկատմամբ: Հետևելով Վենետիկի Մխիթարյաններին՝ հայերը Մոսկվայում բացեցին Լազարյան համբավավոր ճեմարանը (1815թ.): Նրա քաջուս 600 շրջանավարտները լուսավորություն տարածեցին հայ ժողովրդի մեջ: 1870-1881 թվականներին ռուսահայերն ունեին 330 վարժարաններ, որոնցից 247-ը արական, իսկ 83-ը՝ իգական: Կովկասի և Անդրկովկասի քաղաքներում բացվեցին հայկական դպրոցներ և ուսումնական հաստատություններ: Պետերբուրգի, Մոսկվայի, Աստրախանի բարձրագույն դպրոցներում հայերը սկսեցին սովորել: Առաջնակարգ ուսումնական հաստատություններ բացվեցին Նոր Նախիջևանում, Թիֆլիսում, Էջմիածնում, Բեսարաբիայում, Ղարաբաղում, Շամախիում, Բաքվում, Ալեքսանդրապոլում և Կարսում: Ռուսական կայսրության մեջ մտնող այլազգիների մեջ առաջին տեղում էին այն հայերը, որոնք ստանում էին պետական կրթաթոշակ: Նրանք սովորում էին Մոսկվայի, Օդեսայի, Խարկովի, Պետերբուրգի համալսարաններում:

⁷⁰ Նույն տեղում, էջ 33-34:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ ամենալավ սովորողները հայերն էին:⁷¹ Դեռևս Պետրոս Մեծի ժամանակ նրա քաջարի երկու զորահրամանատարները հայեր էին՝ Ղազար Քրիստափորովը և Իվան Յուզբաշին:

Հովհաննես Լազարևը 1856-ին ռուսական խորհրդարանի անդամ էր, Ղազար Նազարովիչը, որը Ղարաբաղի իշխաններից էր, հետո տեղափոխվեց ռուսական բանակ: Իվան Աբամելիքը՝ իշխան և զորավար, Պետերբուրգի և Կիևի նահանգների կառավարիչն էր: 1812 թվականի ռուս-ֆրանսիական պատերազմի ժամանակ նշանավոր էին Դավիթ Դիլանովը, իշխան Աբամելիքը և Մելիքյանը: Նշանավոր ու քաջ զորավարներ էին հայազգի իշխաններ Բեհբուսովը, Արդուօթինսկի-Դուլգորուկին և Մադաթովը: Անմահ անուններ են թողել ռուսահայ զորահրամանատարներ Շոկոլովնիկովը, Լազարևը, Տեր-Ղուկասովը և Լոռիս Մելիքովը: Վերջինս ռուս դիվանագիտության և քաղաքագիտության փառքերից է: Նա փրկեց Ռուսաստանը ներքին պառակտումից և կործանումից:

Արևելահայաստանի ճակատագրից հետո Բ.Սարգիսյանը անդրադառնում է արևմտահայության թուրքիայում կատարած դերին: Թուրքիայի ցամաքային առևտուրը Եվրոպայում իրականացնում էին մեծ մասամբ հայերը: Հայերի ձեռքին էր թուրքիայի գանձապետությունը, համարակալությունը, դրամահատությունը, վառողագործությունը, գորգագործությունը, մետաքսագործությունը, զինագործությունը, մեքենայական աշխատանքները: Թուրքիայում նշանավոր ճարտարապետ էր Կարապետ Գալֆայանը: Հայտնի էին հայ ոսկերիչները, ասեղնագործները, քանդակագործները: Ֆրանսիական գրականության և գիտության հետևորդները թուրքիայում միայն հայերն էին: Պոլսում կային 32 տղաների և 14 աղջիկների դպրոցներ: ⁷² Թուրքիայում կային հայ փաստաբաններ, պատգամավորներ, հյուպատոսներ, փաշաներ, բեկեր, զանազան պետական պաշտոնյաներ, որոնք ազնվորեն ծառայում էին **Թուրքիայի** և սուլթանի շահերին:

Եգիպտոսում էլ կային պետական բարձր պաշտոն զբաղեցնող հայեր: Արտաքին գործոց առաջին նախարարն էր հայազգի Պողոս Բեկ-Յուսուֆը, նրան հաջորդեցին նորից հայեր՝ Ստեփան Բեկը և Նուբար փաշան, որոնք ֆրանսիական

⁷¹ Նույն տեղում, էջ 33:

⁷² Նույն տեղում, էջ 34:

քաղաքատեսությամբ զարգացրին Եգիպտոսը՝ առաջ մղելով աշխարհաշինությունը և երկրագործությունը:

Պարսկաստանին հայ հանճարը ևս պարզևեց այդ երկրի զարգացմանը նպաստող փայլուն անուններ՝ Մանուչար խան, Սուլեյման խան, Հարություն խան, Էնիկալուպով խան, Դավիթ խան:

Հետագոտության վերջում Բ.Սարգիսյանը զետեղում է իրեն ժամանակակից մտավորականների՝ իտալացու, ամերիկացու, ֆրանսիացու կարծիքները հայերի մասին:

Իտալական պատմագրության պարծանքներից Կեսար Կանդին իր համընդհանուր պատմության մեջ գրում է, թե Թուրքիայում առաջադիմություն սիրող և քաղաքականության ձգտող տարրը հայ ժողովուրդն է:⁷³

Ամերիկյան քարոզիչ Դուայթն ասում է, թե ուր որ հայտնվում են հայերը, հանդես են գալիս որպես ճարպիկ ու աշխատասեր մարդիկ: Թուրքիայում հայերը ունեն թուրքերի հաստատակամությունը և հույների նուրբ ու թափանցիկ միտքը: Մի խոսքով հայերը Արևելքի անզլո-սաքսոնացիներն են:⁷⁴

Իսկ հայագետ Էդուարդ Դյուլորիեն գրում է.«Ասում են, թե հայերն Արևելքում նույնն են, ինչ որ շվեցարացիները Արևմուտքում: Սակայն ավելի ճիշտ կլինի նրանց համեմատել հոլանդացիների հետ: Նրանց մեջ նկատվում է նույն մշտական, բայց խաղաղ գործունեությունը, նույն ձգտումը հարստություն ձեռք բերելու համար, նույն արհամարհանքը արտաքին փայլի նկատմամբ: Նրանց բոլոր առաջադեմ գործերը, որ նրանք կատարում են խաղաղությամբ, անձանոթ է Եվրոպային, ուր չեն հասնում նրանց գրքերն ու պարբերականները»:⁷⁵

Ինչպես տեսնում ենք **Վենետիկյան Սուրբ Ղազար** կղզու մեծարգո միաբանը հային բացատրում է նրա ազգային առավելությունները՝ ջանալով նրա ապագան կարգավորել այդ լուսավոր ու կենսահաստատ առավելություններով:

⁷³ Նույն տեղում, էջ 36:

⁷⁴ Նույն տեղում:

⁷⁵ Նույն տեղում:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Հոռմի նշանավոր կայսր Մարկոս Ավրելիոսը

Բարոյախոս և մանկավարժ

*Ամեն օր անսխալ և արդարությամբ լի
գլուխգործոցներ տեսնելով՝ անշնորհք և
անհանճար մտքերն էլ նրանց մեջ կրթվում են
և վայելուչի ու շնորհալիի ճաշակն են ստանում,
վարժվում են ըմբռնել արվեստի և բնության գործերի
մեջ և հասկանալ, թե որն է գեղեցիկ և որը՝
պակասավոր, և այս ցանկալի մտածողությունը
դառնում է նրանց հոգուն սովորական:
Պորփյուր*

«Բազմավեպի» տարբեր համարներում նյութեր ենք գտնում Հոռմի նշանավոր կայսր Մարկոս Ավրելիոսի⁷⁶ մանկավարժական ու բարոյախոսական հայացքների վերաբերյալ:

Մարկոս Ավրելիոսը ստոիկյան ուսմունքի հետևորդ էր և աչքի էր ընկնում մարդասիրությամբ: Նա վարում էր համեստ ու խստակրոն կյանք. հոգուտ քրոջ հրաժարվել էր հայրական ժառանգությունից: Նա հաղթական պատերազմներ է վարել պարթևների և գերմանական ցեղերի դեմ: Երբ տարած պատերազմների համար նրա զորքը պահանջում էր լրացուցիչ պարզև, նա համարձակ պատասխանում է, թե չի կարող լրացուցիչ պարզև տալ, որպեսզի չբարձրացնի ժողովրդի հարկերը: Դա երևում է ձերականոյտին ուղղված մի թղթից: Մի անգամ Ավրելիոսի զորքը հոգնած էր ու ծարավ: Թշնամին սպառնում էր հաղթել զորքին: Կայսրը իր մոտ է կանչում քրիստոնյաների գնդի առաջնորդին և պատվիրում, որ նա իր Աստուծոց օգնություն խնդրի: Քրիստոնյաների աղոթքով Աստված առատ անձրև է պարզևում, և զինվորները սաղավարտներով խմում են անձրևաջուրը, իսկ դրանից հետո թշնամու բանակի գլխին կայծակներ են թափվում և մեծ վնասներ հասցնում:⁷⁷

⁷⁶ «Բազմավեպ», Վենետիկ, 1866, էջ 121-180:

⁷⁷ Մարկոս Ավրելիոս, Իմաստասիրական և խրատական թղթերը, Վենետիկ, 1868, հ. Ե:

Հետաքրքիր է, որ Մարկոս Ավրելիոսն իր գահակալության ժամանակ ցուցաբերել է քրիստոնեական ներողամտության մի շարք դրսևորումներ: Նա ջանում էր, որ բոլորն իրենից գոհ լինեն. որպես բարբարոսություն վերացրեց սուսերամարտերը և փոխարենը մտցրեց իմաստասիրական վիճաբանությունները: Ավրելիոսը խստագույնս պատժում էր այն զինվորներին, որոնք խաղաղ բնակիչներից մի հավ անգամ կարող էին վերցնել: Հավանաբար պատմահայր Մովսես Խորենացին, որը մեծ էրուդիցիայի տեր էր և գիտեր հունահռոմեական մտքի նվաճումները, V դարում ծանոթ էր նաև Մարկոս Ավրելիոսի գրվածքներին, որովհետև վերջինիս թղթերում և հայ պատմահոր մտքերում տեսնում ենք մի շարք ընդհանրություններ: Մարկոս **Ավրելիոսի զինվորներին** ուղղված պահանջներից լիովին հասկանալի է դառնում Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» եզրափակող Ողբի հետևյալ հատվածը. «Զինվորականները՝ անարի, պարծենկոտ, զենք ասող, ծույլ, ցանկասեր, թուլամորթ, **կողոպտիչ**, զինեմոլ, հելուզակ, ավագակների բնութենակից»:⁷⁸

Հայ մատենագրության պատմահոր և Հռոմի կայսեր Մարկոս **Ավրելիոսի զինվորներին** ուղղված այս պարտադիր պահանջները այսօր էլ կարևոր են ու արդիական:

Մարկոս Ավրելիոսից հասել են բազմաթիվ թղթեր: Էպիստոլյար գրականության այդ տեսակը, որը լայնորեն տարածված էր հունահռոմեական գրականության մեջ, իր դրսևորումներն ունի եվրոպական ու ռուսական գրականություններում. Հռոմի կայսեր իր աղջկա դաստիարակությանը վերաբերող թուղթը կոչվում է՝ «Մարկոս Ավրելիոս կայսեր հանդիմանությունն, որ իր Փոստինա կնոջն ու Լուկիլլա աղջկանը տվեց»:⁷⁹

Ամեն մի դարաշրջան ունի դաստիարակության իր ձևերն ու պահանջները: Դրանք կապված են տարբեր ազգերի կրոնական, բարոյախոսական, հոգեբանական պատկերացումների, ազգի քաղաքակրթված լինելու աստիճանի հետ: Մի բան, սակայն, ընդհանուր է. ծնողն իր պատկերացումների սահմաններում ցանկանում է իր որդուն և դստերը տեսնել կատարյալ՝ դրանով պայմանավորելով նրա կյանքի ողջ հետագա ընթացքը:

⁷⁸ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 453:

⁷⁹ Մարկոս Ավրելիոս, Իմաստասիրական և խրատական թղթերը, Վենետիկ, 1868, էջ 57-59:

Երբ ուշադիր կարդում ենք Մարկոս Ավրելիոսի վերոհիշյալ թուղթը, ապա տեսնում ենք նրա որոշ պահանջների մշտական լինելը բոլոր ժամանակների համար, միաժամանակ հասկանում ենք, թե որքան փոխվել է կնոջ վիճակը XX և XXI դարերում, երբ որոշ զարգացած երկրներում կանայք հավասար իրավունքներ ունեն տղամարդկանց հետ:

Հռոմեկան կայսեր թղթերից իմանում ենք նաև նրա կնոջ՝ (վերջինս Հռոմի Անտոնինոս միապետի դուստրն էր) Փոստինայի և նրանց դստեր՝ Լուկիլլայի անունները:

Առաջին հերթին կայսրը չի հավանում ոչ իր կնոջ և ոչ էլ իր դստեր վարքագիծը, որն իր պատկերացումներից ու պահանջներից շատ հեռու էր: Նրա կարծիքով աղջիկը հնազանդ չէ իր մորը, որովհետև մայրը ճիշտ չի կրթել նրան: Ըստ Ավրելիոսի՝ աղջկա կրթությամբ պետք է զբաղվի բացառապես մայրը, իսկ տղայի կրթությամբ՝ հայրը: Իհարկե, նա չի մոռանում, որ կարևոր է նաև տղայի ուսուցիչների դերը: Մեկ այլ թղթում, որը կոչվում է «Մարկոս Ավրելիոս կայսեր խոսակցությունը, որը վարեց իր Կոմոդոս զավակի ուսուցիչների **հետ» տեսնում** ենք, թե ինչպես հայրը շտապում է իր որդուն կտրել Փոստինա մոր դաստիարակությունից ու այդ գործը հանձնել տղամարդ ուսուցիչներին:⁸⁰ Հետաքրքիր է, որ հայրը երագում է, որ որդին այնպիսի դաստիարակություն ստանա, որ նմանվի աստվածներին:⁸¹ Այս պահանջը կա նաև V-VI դարի հայ նշանավոր փիլիսոփա Դավիթ Անհաղթի «Փիլիսոփայության սահմանումները» երկում. «Որովհետև էլ ի՞նչ կարող է լինել ավելի երանելի և վայելուչ նպատակ, քան ըստ մարդկային կարողության Աստծուն նմանվելը»:⁸² Ավրելիոսի կարծիքով մարդն ամբողջ կյանքում պետք է սովորի, որ իր գիտելիքներով ու բանականությամբ տարբերվի անասուններից: Երբ նա Հունաստանում էր, այնտեղից Հռոմ էր բերել Պյութագորասի ճեմարանի դռանը դրված վերջինիս արձանը, որի վրա փիլիսոփայի ձեռքով փորագրված են եղել հետևյալ խոսքերը. «Ով որ իմանալու բաները չգիտի, մարդկանց մեջ անասուն է, ով որ պետք եղածից ավելին չգիտի, անասունների մեջ մարդ է, իսկ ով որ գիտի այնքան, որքան հնարավոր է

⁸⁰ «Բազմավեկ», Վենետիկ, 1866, էջ 119:

⁸¹ Նույն տեղում:

⁸² Դավիթ Անհաղթ, Երկեր, Երևան, 1980, էջ 80:

իմանալ, մարդկանց մեջ Աստված է»:⁸³ Ահա որոնք էին Ավրելիոսի պահանջներն իր որդուց՝ ապագա Հռոմի կայսրից: Նրա կարծիքով մեծագույն պատիժ է մոր համար, երբ տեսնի, թե ինչպես է հայրը պատժում աղջկան, նույն կերպ մեծագույն ամոթ է հոր համար, եթե տեսնի, թե ինչպես է մայրը պատժում իր որդուն: Թղթի հենց սկզբում կայսրը զետեղում է իր ողբի մի հատվածը՝ ուղղված Հռոմին, ոչ թե նրա համար, որ այն ավերվել է, այլ նրա համար, որ Հռոմի որդիներն ու դուստրերը կրթված ու առաքինի չեն. «Ո՛վ Հռոմ, չեմ ողբա վրադ, որ պալատներդ ավերել են, պարիսպդ քանդել, անտառներդ այրել, բնակիչներդ պակասել, դրանց վրա չեմ լալիս: ...Այլ ողբում եմ ու վրադ կրկին ողբում՝ տեսնելով քեզ ու հայրերին առաքինությունից ու դրա կրթությունից զուրկ: Իսպառ կորավ մեր հայրենիքը, երբ պակասեց տղաների ու աղջիկների կրթությունը, տղաները լրբացան, աղջիկներն ամոթխածությունը մի կողմ դրեցին, ու մայրերը անպարկեշտ դարձան»:⁸⁴

Այս ողբը կայսրը գրում է իր կնոջ՝ Փոստինայի վրա ներգործելու համար, քանզի վերջինս այնքան է անտեսել իրենց դստեր դաստիարակության խնդիրները, որ նա աղջկան ոչ պատշաճող վարքագիծ է դրսևորում: Նախկինում Հռոմի ազնվական դասի կանայք ամոթխած էին, չէին սիրում տնից դուրս գալ և զբաղվում էին միայն տան հոգսերով:

Կայսրը կատարում է հետաքրքիր համեմատություն. «Էտնա **հրաբախային** լեռը այնչափ չի վնասում սիցիլիացիներին, որքան մի անհամեստ կինը՝ հռովմեացիներին. որքան թագավորություններ կործանվեցին, որքան թագավորներ կորան կնոջ պատճառով, այս երևույթին վերջ տալու համար, որքան վտանգավոր ջանքեր ու զոհեր են եղել»:⁸⁵ Ակամայից հիշում ես ֆրանսիական այն հայտնի ասացվածքը, որը հենց ֆրանսերենով էլ կա բոլոր քաղաքակիրթ ազգերի մոտ. «Cherchez la femme» («Փնտրեցե՛ք կնոջը»): Այս թևավոր խոսքը վերագրվում է Շառլ Մորիս Թալեյրանին (1757-1838), որ XIX դարասկզբին ֆրանսիացի նշանավոր քաղաքական գործիչ էր և Նապոլեոն Առաջինի ժամանակ արտաքին գործերի նախարարը:⁸⁶ Ի դեպ, նույն միտքը կա հայ ժողովրդական առած-ասացվածքներում՝

⁸³ «Բազմավեպ», Վենետիկ, 1866, էջ 121:

⁸⁴ Նույն տեղում, էջ 57:

⁸⁵ Նույն տեղում:

⁸⁶ Французско-русский фразеологический словарь, Москва, 1963, с.466.

«Կնոջ մատն է խառը», ինչպես նաև XV դարի հայ նշանավոր տաղասաց Հովհաննես Թլկուրանցու մի տաղում, որում կարդում ենք.

Կինն ըզԴաւիթ արքայն պղծէ,

Ու Սողոմոնն ապականէ,

Զսուրբ Յովհաննէս գլխատէ,

Աստուած փրկէ կնկան շառէ:⁸⁷

Կայսեր կարծիքով կանանց որոշ թերություններ նման են դալար, կանաչ ճկուն ճյուղին, և դրանք հեշտ ուղղելի են, իսկ անհամեստությունն ամենավտանգավորն է՝ այն նման է չոր փայտի, որն ուղղել անհնար է. այն պարզապես կկոտրվի: Նա պահանջում է, որ կինը մտածի միայն տան մասին, սրբորեն կատարի իր պարտականությունները, քիչ խոսի, հավատարիմ լինի իր ամուսնուն, լինի համեստ ու ամոթխած:

Փաստորեն կնոջ նկատմամբ ներկայացվող այս պահանջները գրեթե նույնությամբ առկա են XII դարի հայ նշանավոր կաթողիկոս ու մատենագիր Ներսես Շնորհալու (1101-1173) «Թուղթ ընդհանրական» գործում. «Պատվիրում եմ նաև ձեզ՝ կանանց, որ պարկեշտ և բարեձև լինեք ամեն ինչում, ինչպես վայել է քրիստոնյաներին: Ոսկուց ու արծաթից ավելի ձեր անձերը զարդարեք ամոթխածությամբ և պատկառանքով»:⁸⁸

Այնքան առաջադեմ է հռոմեական այս կայսրը, որ չի ընդունում այն սովորությունը, երբ աղջկա ամուսնության մեջ բախտորոշ դեր է կատարում աղջկա ունեցած օժիտը: Այս հարցի շուրջ համաշխարհային գրականության մեջ ստեղծվել են բազմաթիվ գործեր: Բավական է հիշել ռուս հանրահայտ դրամատուրգ Ալեքսանդր Օստրովսկու «Անօժիտը» և հայ դասական գրող Գաբրիել Սունդուկյանի «Պեպո» պիեսները, որոնք վերաբերում են աղջիկների ամուսնության մեջ օժիտի կատարած բախտորոշ դերին: Ականավոր ֆրանսիացի հայագետ Ֆրեդերիկ Մակլերը 1909 թվականին Թիֆլիսում հանդիպել է հայ նշանավոր դրամատուրգ Գաբրիել Սունդուկյանին, որը փայլուն գիտեր ֆրանսերեն, եղել էր Փարիզում ու հիացած էր ֆրանսիական դասականներով: Արդեն ծերունագարդ գրողը խոստովանում է, որ իր ողջ ստեղծագործությունը նվիրված է կնոջ իրավունքները հասարակության մեջ

⁸⁷ Հովհաննես Թլկուրանցի, Տաղեր, Աշխատասիրությամբ՝ Էմ.Պիվազյանի, Երևան, 1960, էջ 188:

⁸⁸ Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, «Գանձասար» հանդես, 1991, էջ 122:

պաշտպանելու խնդիրներին:⁸⁹ Դրանցից մեկը օժիտի խնդիրն էր, որը ներկայացված է նրա գլուխգործոցում՝ «Պեպո» պիեսում: Ազնիվ ձկնորս Պեպոն մուրհակը կորցնելու պատճառով չի կարողանում մեծահարուստ Զիմզիմովից ստանալ վերջինիս մոտ պահվող քրոջ օժիտի գումարը, և քրոջ փեսացուն այդ պատճառով չեղյալ է համարում սպասվող ամուսնությունը: Քրոջն անսահման նվիրված Պեպոն՝ տագնապում է քրոջ ճակատագրի համար, սակայն չի կարողանում որևէ կերպ գտնել քրոջ օժիտի գումարը: Նա ինքն իրեն հարց է տալիս. «Ամա վո՛րդի ճարիմ էն զահրումար փուղը...»:⁹⁰

Մարկոս Ավրելիոսը դեռ շատ դարեր առաջ դեմ էր օժիտի բախտորոշ դերին: Նա հիշեցնում է, թե Լիկուրգոսը օրենք է հաստատել, որ հայրերը իրենց աղջիկներին օժիտ չտան, որպեսզի նրանց հետ ամուսնացողը հաշվի առնի միայն նրանց առաքինությունը և աղջիկներն էլ ջանան առաքինությունը որպես օժիտ պատրաստել:⁹¹ Կայսրը սրտանց անիծում է նրան, ով օժիտի սովորույթը մտցրեց Հռոմի մեջ, որովհետև դրանով Հռոմը հարստացավ գանձով, բայց աղքատացավ առաքինությունից: Ավրելիոսը պատմում է մի հետաքրքիր իրական դեպք՝ կապված հարստության և ամուսնության հետ: Հռոմեացի Կամիլլոսը գալերին հաղթելուց հետո վերադարձավ հայրենի տուն: Նա ուներ մի զավակ և այնքան հարուստ էր, որ տարբեր թագավորներ նրա զավակին որդեգիր էին ուզում դարձնել, իսկ ծերակույտի խորհրդի անդամներն երազում էին այդ հարուստ որդուն փեսայացնել իրենց: Կամիլլոսի կինը վախճանվել էր. նա վաթսուն տարեկան էր, իսկ որդին՝ երեսուն, սակայն երկուսն էլ չամուսնացան: Կամիլլոսը հետևյալ ձևով է ներկայացնում իր և իր որդու կին չունենալը. «Իմ չամուսնանալու ու որդու չամուսնանալու պատճառն այն է, որ ոմանք իրենց աղջիկը հարուստ օժիտ ունենալու համար առաջարկեցին, ոմանք ազնվական լինելու համար, ոմանք էլ նորահասակ ու գեղեցիկ լինելու համար. մեկը չեղավ, որ իր աղջիկը առաքինի լինելու համար առաջարկեր»: Այս խոսքերը Ավրելիոսն ուղղում է իր կնոջը՝ Փոստինային, որը խիստ թերանում էր աղջկա դաստիարակության խնդիրներում: Փոստինան աղջկան իր հետ տանում էր Կապիտոլի, ուր կային զինվորականներ, նրա հետ գնում էր թատրոն, ուր նրան

⁸⁹ Դոլուխանյան Ա., Ֆրեդերիկ Մակլերը հայագետ, Երևան, 2011, էջ 153:

⁹⁰ Հայ դրամատուրգիա, Երևան, 1985, էջ 31:

⁹¹ «Բազմավեպ», Վենետիկ, 1866, էջ 58:

տեսնում էին կատակերգու դերասանները: Կայսրն այդ վայրերը համարում է կասկածելի և կնոջ համար ոչ պատշաճ: Ավրելիոսի թղթի այս հատվածում որոշակի ակնարկ կա հանդերձյալ հավերժական կյանքի մասին: Նրա մտքերն այնքան համահունչ են քրիստոնեական վարդապետությանը և հատկապես Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» հանճարեղ երկի որոշ հատվածներին: Ավրելիոսը գրում է.«Մարմնից ենք ծնվել, մարմնի մեջ ենք ապրում, մարմնով ենք մեռնում, բայց դեռ մարմիններս չմեռած՝ բարի կյանքը կորցնում ենք»:⁹²

Նա դնում է շատ կոպիտ պահանջ և ամեն մի հռոմեացի կնոջ համար պարտադիր. «Եթե աղջիկը անվայել տեղ ուզի գնալ, պետք է նրա ոտքը կոտրել, եթե անվայել բանի նայի, պետք է աչքը հանել, եթե լսելիքի համար անպատշաճ բաներ լսի, պետք է ականջին հարվածել, եթե անօրինություն ուզի անել, պետք է նրան ողջ-ողջ թաղել»:⁹³ Փոստինային նրա կայսր ամուսինը հիշեցնում է. տունը հաստատուն է իր սյուներով, նրանցից մեկի վերանալու **դեպքում, տունը** փլվում է: Կինն էլ նույնն է, եթե նրան առաքինի պահող մի հատկանիշն անտեսվի, ապա կինը կդժբախտանա:

Որպես կյանքի էությունը խորապես ըմբռնած փիլիսոփա-մանկավարժ Ավրելիոսը Փոստինային մատնացույց է անում այն ուղին, որով աղջիկը կդառնա ցանկալի առաքինին: Նա իրավացիորեն ամեն մարդու դժբախտության պատճառը համարում է դատարկակեցությունը: Որպեսզի ոչ մի բանական արարած չշեղվի մարդուն վայելող կյանքի ընթացքից, ապա նա պետք է զբաղվի օգտակար գործով: Ուրեմն Փոստինան էլ իրենց աղջկան պետք է զբաղեցնի օգտակար գործերով:

Սա կայսրի վերջին խրատն էր:

Կարծես բոլոր ժամանակների համար է գրված Մարկոս Ավրելիոսի թուղթը՝ ուղղված արենացիներին և սպարտացիներին: Մարդասիրական դիտակետից Հռոմի կայսրը իր նամակով բացատրում է, թե ինչ վնասներ է բերում պատերազմը տարբեր ազգերի միջև: Նրա կարծիքով սպարտացիները իրենց տղաներին հիանալի կրթում են զինվորական գործի մեջ, սակայն մոռանում են նրանց կրթել նաև ուրիշ բնագավառներում: Ու թեպետ Հռոմը վերջին պատերազմում հաղթեց Հունաստանին, ինքը ցնծության մեջ չէ:

⁹² Նույն տեղում, էջ 59:

⁹³ Նույն տեղում:

Հույները պահանջում էին, որ երկու երկրների միջև երեք տարի պատերազմ չլինի, և խաղաղություն պահպանվի: Մակայն Մարկոս Ավրելիոսի կարծիքով առավել լավ է հայտնի պատերազմը, քան կեղծ խաղաղությունը: Բայց, անշուշտ, լավ է, երբ խաղաղությունը խնդրում են խոսքով և ոչ թե նիզակով:

Կայսրի կարծիքով մի ժամանակ Աթենքը կառավարվում էր ոչ թե **հանդունգն** գորավարներով, այլ իսելացի փիլիսոփաներով:

Մարկոս Ավրելիոսը հույներին է վերադարձնում Սելինա գետի մոտ եղած քաղաքների տերությունը, որի համար էլ եղել է վերջին հունա-հռոմեական պատերազմը, և հույները պարտվում են: Միայն կա մի պայման՝ փիլիսոփա Եվքսինիոսը պետք է մնա Հռոմում:

Կարող է պատահել, որ Աթենքը իր ուսումնարանից մի մեծ փիլիսոփայի պակասելը գերադասում է քաղաքներ կորցնելուց: Ճիշտ է պատերազմը զենքով է, սակայն խաղաղությունը իմաստությամբ է:

Պետությունները պետք է ունենան իմաստուն խորհրդականներ, որովհետև երբ իմաստուն մարդիկ չունեն խորհրդական, տգիտությամբ մեծացած մարդիկ մոլության հետևից ընկնելով, պատերազմ են սկսում՝ իրար սպանելու համար:

Եվ այս հարցում չպետք է շատախոս լինել: Կայսրը հիշեցնում է, թե փիլիսոփայության հայրերից Սոկրատը իր ուսումնարանի աշակերտներին սովորեցնում էր. «Անկարելի է հիանալի խոսել՝ առանց լռել գիտենալու»:⁹⁴

Մարկոս Ավրելիոսը հիշեցնում է, թե հին Աթենքում կար օրենք, ըստ որի՝ որևէ պատերազմ չէին սկսում, եթե իմաստուններն այն արդարացի չէին համարում:

Բարոյախոսական ու իրատական թղթեր Մարկոս Ավրելիոսը գրել է դեռ կայսր չեղած ժամանակով: Նա պետական պաշտոնյա էր կամ հազարապետ: Բերենք այդ թղթերից երկուսը, որոնք սկսվում են պարտադիր գրառաջքներով: Դոմեստիանոսի թղթի գրառաջքն. «Հռոմեացի ատենաբան Մարկոսը՝ ծնված Մոնթեչելիոյում, ողջունում է Դոմեստիանոս Կապուացիին. Թող աստվածները քեզ մխիթարեն»:⁹⁵

Իսկ Կատուլլուին գրած թղթի գրառաջքն է. «Մարկոսը՝ ժողովրդի հազարապետը, քեզ՝ Կատուլլոսին, նախկին հազարապետին ողջունում է»:⁹⁶

⁹⁴ «Բազմավեպ», հ.25, Վենետիկ, 1867, էջ 34:

⁹⁵ «Բազմավեպ», հ.24, էջ 239:

⁹⁶ Նույն տեղում, էջ 270:

Դոմեստիանոսին ուղղված թուղթը որոշ չափով կենցաղային բնույթ ունի, սակայն միաժամանակ ունի բարոյախոսական և դաստիարակչական արժեք:

Դոմեստիանոսը մի ձիու համար կռվել է Պատրիկիոս դրացու հետ, որի համար քանտարկվել է, ունեցած-չունեցածը ձեռքից վերցրել են, զավակներին՝ աքսորել, տունն՝ ավերել: Այս ամենի հետևանքով Դոմեստիանոսն ընկել է ծայրահեղ տագնապալի իրավիճակի մեջ, և Մարկոս Ավրելիոսը փորձում է օգնել նրան թե բարոյախոսությամբ և թե նյութապես: Նամակն ավարտվում է հետևյալ ձևով.«Հիմա աշխատավարձս փոքր է, բայց քեզ և կնոջդ մեկական զգեստ եմ ուղարկում և աստվածներին խնդրում եմ, որ քեզ տան, այն ինչ ես ցանկանում եմ քեզ համար: Ինձ էլ տան այն, ինչ դու ես ցանկանում»:⁹⁷

Մարկոս Ավրելիոսը իր բարեկամին գրում է, թե մարդու կյանքն առավել ապահով եղած **ժամանակ, երբեմն դառնում է ամենավտանգավորը**: Եվ բերում է բազմաթիվ հետաքրքիր **օրնակներ**: Հերակլեսը անհաշվելի վտանգներից ազատվեց և՛ ծովում, և՛ ցամաքում: Վերջը մեռավ մի հարձի ձեռքով, որին սիրահարվել էր: Լավոմեդոն Տրոյայի պատերազմի վտանգներից փրկվեց, բայց իր տան մեջ սպանվեց: Ալեքսանդրը, որը շատ բախտավոր էր, ողջ աշխարհի հետ պատերազմելով չմեռավ, բայց մի փոքր թույնով կյանքը կորցրեց: Հուլիոս Կեսարը հիսուններկու պատերազմի մեջ քաջություն անելուց **հետո, խորհրդարանի** մեջ քսաներկու հարվածով սպանվեց: Ասկլիպիոսը՝ Պոմպեոսի եղբայրը, քսան տարի ծովի վրա ավազակություն անելով ողջ մնաց, բայց մի օր ջրհորից ջուր **քաշելիս, ընկավ** ջրհորի մեջ և խեղդվեց: Սցիպիոն Ափրիկացու տասը զորավարները Ափրիկայի անչափ պատերազմներին դիմացան, հետո մի կամրջի վրա իրար **ձաղրելիս, բոլորն** էլ ընկան ջուրն ու խեղդվեցին:⁹⁸

Նա շարունակում է իր օրերի նոր օրինակներով:

Կատուլլոսին ուղղված թուղթը լիովին քաղաքական բնույթի է, և Մարկոս Ավրելիոսի սուր քննադատությունն է Հռոմի քաղաքական գործիչների վարքագծի: Նրա կարծիքով հին՝ հեղինակավոր Հռոմից ոչինչ չի մնացել: Կայսրը, բղեշխը, ծերակույտը, խորհրդականները, հազարապետները, քրմապետներն ամենքը նոր են, սակայն նրանց չար վարքագիծը հին է: Այդ նորերն ամեն ինչի համար կաշառք են վերցնում: Խորհրդարանում բոլորը խոսում են մարդասիրությունից, սակայն

⁹⁷ Նույն տեղում, էջ 241:

⁹⁸ Նույն տեղում, էջ 240:

այնտեղից դուրս գալուց հետո մոռանում են իրենց ասածները և սկսում են չարագործությունները: «Օրերը, տարիներն անցնում են, ու ամեն մարդ միայն իր օգուտի մասին է մտածում, հասարակական բարիքը բոլորովին մոռացված է»:⁹⁹

Պետական պաշտոնյաները հանցանքներ են գործում, սակայն չեն պատժվում: Խորհրդարանում հանցագործին մահապատժի են դատապարտում, այն դեպքում, երբ դատապարտողներն այդ նույն հանցանքն ամեն օր են անում: Իսպանիայից մի խորհրդական գալիս է Հոմա՝ բանակցելու: Իտալիա մտնելու պես նրան տասն անգամ կողոպտում են, իսկ երբ Հոմա է մտնում, տեսնում է իրեն կողոպտողներից մեկը կախում է այն մարդուն, որն իրեն ազատել է կողոպտիչների ձեռքից: Այսինքն՝ մեղավորները կախում են արդարին:

Ինչպես տարբեր են ազգերը, այնպես էլ տարբեր են մարդկանց բաղձանքները. մեկի սիրածը, մյուսն ատում է: Իսպանացին խիստ հիասթափված է Հոմայի խորհրդարանից: Նա ասում է. «Ես այստեղ չեկա Հոմայի գանձարանը տեսնելու, այլ խորհրդարանը, որի մեջ աշխարհի խնդիրներն են լուծվում, ես այստեղ չեկա աշխարհի հաղթողներին տեսնելու, այլ առաքինի մարդկանց: Կամ դուք այն հին հռոմեացիները չեք, կամ այս քաղաքը հին հռոմեացիների քաղաքը չէ»:

Հոմայի հին օրենքների մեջ գրված է, թե պաշտոն չտան այն մարդուն, որն ընկած է պաշտոնի հետևից, այլ նրան, որ միաբանությամբ է ընտրված: Մարկոս Ավրելիոսի կարծիքով Հոմայի թագավորների անհոգությամբ և դատավորների ազահությամբ Հոմայի կառավարությունը կործանվել է:¹⁰⁰

Մարկոս Ավրելիոսը շատ կարևոր խրատներ է ուղղում պալատականներին և գորքին՝ նվիրված ծուլությանն ու պարապ լինելուն:

Պլատոնն ասել է. «Լավ մարդու տարբերիչ նշանը նրա պարապ չլինելն է»:¹⁰¹ Լճացած ու հոտած ջուրն այնքան չի ապականում քաղաքի օդը, որքան անգործ ու պարապ մարդիկ: Ավրելիոսը բացականչում է. «Ո՛վ Հոմա, դու, որ սովորեցնում էիր աշխարհին աշխատել, հիմա թաղվել ես ծուլության մեջ»:¹⁰² Ավրելիոսը ցավով նշում է, թե ծուլ ու պարապ հռոմեացիներն անցնում են բաղնիքից բաղնիք, ըմբշամարտ դիտելուց հետո գնում խեղկատակներին նայելու: Նա խիստ ձաղկում է այն

⁹⁹ Նույն տեղում, էջ 271:

¹⁰⁰ Նույն տեղում, էջ 274:

¹⁰¹ Նույն տեղում:

¹⁰² Նույն տեղում, էջ 275:

չարագործներին, որոնք ճանապարհին սպանում են վաճառականներին, կողոպտում են ճամփորդներին, գիշերը ջարդում են մարդկանց բնակարանների և տաճարների դռները և գողություն անում: Այդ մարդիկ չեն աշխատում իրենց ապրուստը հոգալու համար, այլ դիմում են չարագործության:

Մեծ հռոմեացիին պարապությունը համարում է մեծագույն չարիք: Հին Հռոմի պատմությունից նա բերում է մի դրվագ, որը, նրա կարծիքով, միշտ պետք է հիշվի: Հռոմում հաստատվելու եկած մարդը պետք է քննություն տար: Այդ մարդուն չէին հարցնում, թե **որտեղի՞ց է գալիս, թե ո՞վ է, ի՞նչ ազգից** է: Իսկ պետական պաշտոնյա Կատոնը¹⁰³ շոշափում էր նոր եկածի ձեռքերը ու երբ տեսնում էր աշխատանքից կարծրացած ձեռքեր, այդ մարդուն ընդունում էր, իսկ եթե ձեռքերը փափուկ էին ու գործ չարած, ապա դրանց տիրոջը հետ էր ուղարկում:

Ավրելիոսն ասում է, թե ինքը և բոլոր հռոմեացիները սիրում են Կատոնին և վերջինիս անունը կապրի հավերժ, և ինքը Կատոնին նախընտրում է Սցիպիոն Ափրիկացուց,¹⁰⁴ որն արյուն հեղելով, անմեղներին գլխատելով, քաղաքներ այրելով ուզում էր փառք բերել Հռոմին:

Այս ամենը պատմելով Հռոմի ապագա կայսրը պալատականներին պատգամում է լինել աշխատասեր և գործունյա, որպեսզի օրինակ լինեն ապագայի թագավորների և հռոմեացիների համար:

Մարկոս **Ավրելիոսը, նոր** կայսր եղած ժամանակ և հետագայում գրել է բազմաթիվ այլ թղթեր, որոնց դաստիարակչական ու բարոյախոսական արժեքն այսօր էլ կարևոր է:

Մարկոս Ավրելիոսն ասում է, թե աստվածները մարդուն հեզ ու բարի են ստեղծել և պետք չէ, որ մարդը իր նմանի հետ վարվի թունավոր օձի կամ կատաղի գազանի պես:

Անտիգոնոսին ուղղված թուղթը խիստ քննադատում է անարդար դատավորներին: Նա հին Հռոմի մասին ունի փաստեր, ըստ որոնց վերջինս եղել է մարդասիրական պետություն:

¹⁰³ 149 թվականից համարակար (ցենզոր), պայքարել է Հռոմի բարքերի կարգ ու կանոնի համար, որպեսզի հզորացնի Հռոմը (տե՛ս «Petit Rober-2», Paris, 1988, p. 349).

¹⁰⁴ Սցիպիոն Ափրիկացի – Հռոմեական զորահրամանատար և քաղաքական գործիչ (235-183): 211-ին եղել է Իսպանիայի պրոկոնսուլը, գրավել է Կարթագենը (տե՛ս «Petit Robert-2», p. 1640)

Հռոմի հիմնադրվելուց տասներկու տարի հետո Հռոմուլոս Առաջինը հրաման արձակեց, որ շատերը ուրիշ վայրերից գան Հռոմ, այնտեղ տեղափոխվեն բոլոր արքունիքները, հալածյալները, խեղճերը:¹⁰⁵ Հին տարեգիրները վկայում են, թե տասը տարվա մեջ Հռոմի բնակիչներն ավելի շատացան, քան կային Բաբելոնում ու Կարթագենում:

Մարկոս Ավրելիոսը հին հռոմեական թղթերի մեջ շատ փաստեր է գտել, ըստ որոնց Հռոմն անցյալում բարեգութ և մարդասեր է եղել: Պարթևները խոր հարգանքով են գրում հին Հռոմի արդարամտության մասին:

Երեսուներթ տարեկանում կայսրը ձմեռն անցկացնում է Կիպրոսում ու լսում է, որ Արկադիա լեռան վրա մի թագավորի գերեզման կա՝ չորս սյուներով զարդարված: Ավրելիոսը գնում է գերեզմանը տեսնելու և նրա վրա կարդում է.«Ինչ որ քաղցրությամբ կարող էի անել, չարեցի պատերազմով, ում որ աղաչելով կարող էի համոզել, չվախեցրի սպառնալիքով, ում կարող էի խրատով ուղղել, ծեծել չսովեցի, պատժեցի նրան, ում մինչ այդ երեք անգամ ներել էի: Ցավում եմ նրանց համար, ում պատժել եմ, ուրախանում նրանց համար, ում ներել եմ»:¹⁰⁶

Այս արձանագրությունը անմահացրել է բարի և արդարադատ թագավորի անունը դարերի համար:

Մարկոս Ավրելիոսը ձգտում է լինել արդարադատ և խնդրում է, որ աստվածներն իրեն օգնեն այդ գործում: Նա բոլորովին չի նախանձում ոչ Պոմպեոսին, ոչ Հուլիոս Կեսարին, ոչ Սցիպիոն Ափրիկացուն՝ գրաված երկրների և տարած հաղթանակների համար:

Երբ Պոմպեոսը գրավում է Հրեաստանը, Վալերիոս Գրաքոսին այնտեղ կուսակալ է նշանակում: Մի եբրայեցի գալիս է Հռոմ և ծերակույտին բողոքում է հռոմեական կուսակալի անօրինություններից: Նա ասում է, թե հռոմեացիներն այնպիսի մոլորություններ են սովորեցնում հրեա երիտասարդներին, որ ոչ գրքերում են կարդացել և ոչ էլ իրենց հայրերից լսել: Եբրայեցի ծերն ասում է.«Մեզ գրասիրտ կուսակալ տվեք, չափազանց խիստ մի եղեք մեզ հետ, մենք էլ հլու կլինենք ձեզ:

¹⁰⁵ Նույն տեղում, էջ 302:

¹⁰⁶ Նույն տեղում, էջ 302:

Քաղցրությամբ մեզնից սեր կգտնեք, ինչպես հայրը իր զավակից, իսկ խստությամբ կեղծավորություն, ինչպես տերն իր ծառայից»:¹⁰⁷

Հռոմը ստիպված է լինում պաշտոնից հանել Վալերիոս Գրաքոսին և տեղը նշանակել Պիդատոսին:

Իր թղթերի մեծ մասում Ավրելիոսը հաճախ է վկայակոչում հույն հռչակավոր փիլիսոփա Սոկրատեսին: Սոկրատեսի օրինակով նա հռոմեացիներին պատվիրում էր չտարվել հարստամոլությամբ: Մի օր Սոկրատեսը ոսկին գցում է **ջուրը ասելով**. «Ով մարդուն գերի դարձնող հարստություն, ես քեզ կընկղմեմ ջրի մեջ, որ դու ինձ չընկղմես»:¹⁰⁸

Մարկոս Ավրելիոսը Հռոմից քշում է խեղկատակ դերասաններին և արգելում նրանց ներկայացումները: Այդ մասին խոսում է Լամբերդոս Հելլեսպոնտոս կուսակալին գրած թղթում: Նա հիշեցնում է, թե երբ Կապիտոլիոնում եղած թղթերն ու տարեգրությունները թերթելով, գտնում է Որուեստոս անվանի ատենաբանի խոսքը Սցիպիոն Ափրիկացու մասին, որը պատերազմից վերադառնալով, սկսել է շրջել դերասանների հետ: Ատենաբանը ծաղրում է Սցիպիոնին, որին Աֆրիկան իր բոլոր խելացիներով չկարողացավ հաղթել, իսկ խելագար դերասանները հաղթեցին, ու նրա հեղինակությունը ընկավ հռոմեացիների աչքում: Մարկոս Ավրելիոսի կարծիքով այդ խոսքերը շատ խիստ էին, բայց իրավացի: Դրանք նաև մարգարեական էին. ծեր Սցիպիոնին բարեկամները Հռոմից արքայում են Հելլեսպոնտոսի կողմին: Կայսրը ճիշտ հայ միջնադարի մտածող Հովհան Մանդակունու նման մերժում է թատրոնը և նրա ներկայացումներում վնաս տեսնում հասարակության համար: Հովհան Մանդակունին «Անօրեն և դիվական թատերախաղերի մասին» ճառում գրում է. «Որովհետև այնտեղ, ուր կատակներն են, դերասաններ, լյտի խաղեր ու ծաղրանք, այնտեղ դներն են նրանց հետ պարում, սերմանում բազում աղտեղություններ զեխացածների մտքերի մեջ»:¹⁰⁹

Իր «Պոետիկայում», խոսելով կոմեդիայի մասին, Արիստոտելը նշում է, որ կոմեդիան վատերի վերարտադրությունն է, և ծաղրականը վատի մի մասն է

¹⁰⁷ Նույն տեղում, էջ 304:

¹⁰⁸ Նույն տեղում, էջ 306:

¹⁰⁹ Ա.Դոլուխանյան, Դրվագներ հայ գրաքննադատական մտքի պատմությունից, Երևան, 2009, էջ 137:

կազմում»:¹¹⁰ Քիչ հետո նա նկատում է. «Մենք չգիտենք կոմեդիայի աստիճանական փոփոխությունները, քանի որ սկզբից նրա վրա քիչ ուշադրություն են դարձրել»:¹¹¹

Մանկավարժությունից և առավել ևս հոգեբանությունից հայտնի է, որ վատը մարդը ավելի շուտ ու հեշտ է ընդօրինակում, քան լավը. վատը հաճախ ջանք չի պահանջում, հեշտ է, իսկ լավն ընդհակառակը, երբեմն պահանջում է մեծ ջանքեր:

Մարկոս Ավրելիոսը Հռոմի օրինակելի կայսրն էր, Հովհան **Մանդակունին Հայաստանի կաթողիկոսը**: Նրանք տարբեր ժամանակահատվածների գործիչներ էին, սակայն իմաստուն առաջնորդներ էին ու մտահոգ էին, որ իրենց երկրները կրթված ու օրինավոր լինեն: Հենց այդ մտահոգությունն էլ նրանց ստիպել է խստորեն մերժել ծաղրական խեղկատակությունները, որոնք հավանաբար շատ սիրված էին:

¹¹⁰ Արիստոտել, Պոետիկա, Երևան, 1955, էջ 152:

¹¹¹ Նույն տեղում, էջ 153:

ՀԱՎԵԼՎԱԾ

«Բազմավեպում» եղած բարոյախոսական և խրատական որոշ նյութեր, որոնք ունեն դաստիարակչական արժեք, ներկայացնում ենք հավելվածի մեջ:

Կարլոս Մեծի և նրա տասնվեցամյա որդու երկխոսությունը

- Ի՞նչ է գիրքը – Պատմության պահապանը:
- Ի՞նչ է խոսքը – Սրտի թարգմանը:
- Ի՞նչ է լեզուն – Օղի խարազան է:
- Ի՞նչ է օղը – Կյանքի պահպանիչը:
- Ի՞նչ է կյանքը – Հաճույքի վայելումը, աղետների ցավը, մահվան ակնկալությունը:
- Ի՞նչ է մահը – Անխուսափելի պատահար, անստույգ ճանապարհ, կենդանությունը կորցնելու համար արտասուք, կտակի հաստատում, մարդուն գողացողը:
- Ի՞նչ է մարդը – Մահվան գերին, անցավոր ճանապարհորդ, սեփական տանը հյուր:
- Ի՞նչ է երկինքը – Շարժական մթնոլորտ, մեծատարած կամար:
- Ի՞նչ է լույսը – Ջահ բոլոր իրերի համար:
- Ի՞նչ է օրը – Գրգիռ և շարժառիթ աշխատելու:
- Ի՞նչ է արեգակը – Տիեզերքի պայծառությունը, գեղեցկության հաստատությունը, բնության շնորհը, օրվա փառավորությունը, ժամերի բաժանարարը:
- Ի՞նչ է երկիրը – Ամեն աճողի մայրը, ամեն գոյերի դայակը, կյանքի շտեմարանը, ամեն ինչ կլանող անդունդը:
- Ի՞նչ է ծովը – Ճանապարհ հանդգնության, սահմանաձայր հողի, օթևան գետերի, աղբյուր անձրևների:
- Ի՞նչ է ձմեռը – Ամռան տարագրությունը:
- Ի՞նչ է գարունը – Կյանքի պատկերը:
- Ի՞նչ է ամառը – Երկիրը զարդարող գորություն՝ հունձը հասունացնող:

- Ի՞նչ է աշունը – Տարվա շտեմարանը:
- Ի՞նչ է տարին – Աշխարհի քառաձի կառքը:
- Ի՞նչ է խոտը – Երկրի զգեստը:
- Ի՞նչ են ընդդեմները – Բժիշկների բարեկամները և խոհարարների փառքը:
- Ի՞նչ է այն բանը, որ մանուկներին քաղցրացնում է – Անոթիությունը:
- Ինչի՞ց մարդիկ երբեք չեն հոգնում – Շահ ստանալուց:
- Արթնության քունը ո՞րն է – Հույսը:
- Ի՞նչ է հույսը – Աշխատության զովացումը:
- Ի՞նչ է բարեկամությունը – Սրտի նմանությունը:
- Ի՞նչ է հավատը – Անձանոթի ստուգումը:¹¹²

Մի գորավոր դաս

Ֆրանսիացիների Հենրի Չորրորդ թագավորը մի օր որսորդությունից հետո հեռանում է ընկերներից և գնում մի պանդոկ ու պանդոկապետին հարցնում է, թե ուտելիք ունի՞: Վերջինս կարծելով, թե իր դիմաց սովորական զինվորական է, պատասխանում է.

Ո՛չ, պարոն, շատ ուշ հասար:

Բայց թագավորը, տեսնելով գեղեցիկ պատրաստված շամփուր, հարցնում է, թե ում համար է այդ խորոված միսը: Պանդոկապետը պատասխանում է, թե վերի հարկում նստած մի քանի պարոնների համար:

Հենրի Չորրորդը պանդոկապետին խնդրում է, որ նա վերի հարկում նստած պարոններին ասի, թե մի հոգնած ճանապարհորդ խնդրում է, որ կամ իրենց խորովածից բաժին տան, կամ թողնեն նրանց սեղանակից դառնալ:

Պարոնները բարձրաձայն երկու խնդրանքն էլ մերժում են: Երբ Հենրի թագավորը լսում է այս տմարդի պատասխանը, կանչում է իր թիկնապահներին ու որպես թագավոր հրամայում է խարազանել պարոններին, որպեսզի սովորեն բարեկիրթ ու մարդկային լինել:¹¹³

Պատժված ծուլություն

¹¹² «Բագմավեպ», հ. ԼԲ, Վենետիկ, 1874, էջ 145:

¹¹³ Նույն տեղում, էջ 145-146:

Բուղարական գրույց

Կար ժամանակ, երբ մարդիկ ավելի **բարեկրոն էին և կենդանիներն** ու անշունչ առարկաները նրանց ենթարկվում էին: Բայց երբ մարդիկ գնալով չարացան, ամեն ինչ փոխվեց: Դրա ապացույցը այս գրույցն է:

Երբ մարդը փայտը կոտրում էր, փայտի շեղջը մարդու հրամանով իրեն-իրեն տեղափոխվում էր այն վայրը, ուր մարդը կամենում էր:

Մի անգամ, երբ մի կին կոտրված փայտի շեղջի կողքից քայլում էր, ձանձրացավ ու քայլելուց հոգնած՝ նստեց քայլող շեղջի վրա, սակայն շեղջն անշարժացավ ու այլևս կնոջ հրամաններին չենթարկվեց: Ջայրացած կինը սկսում է աջից ու ձախից հարվածել շեղջին, սակայն շեղջը մնում է անշարժ: Այնժամ երկնքից լսվում է մի ձայն, որն ասում է, թե կնոջ ծուլության պատճառով այլևս նա պիտի շալակած տանի փայտը:

Կինը ստիպված արձակում է գոտին, կապում է փայտերը որպես խուրձ, շալակում է այն և տանում:¹¹⁴

Ազգային առածներ¹¹⁵

Աղքատն ուներ հաց ու պանիր, գիշերը քունը չէր տանում:

Ամեն ծաղիկ իր տեսքն ունի, ամեն հասակ իր պետքերը:

Ամեն ջուր գերան չի բերում:

Ուրիշների համար լաց լինողը, իր աչքերից կգրկվի:

Անցած բանին մի ափսոսա, անհավատ բանին մի հավատա:

Անժամանակ ծուղրուղու կանչող աքլորի գլուխը կտրում են:

Ասում են առ և տուր, ոչ թե առ և կուլ:

Գարնան գառն է գովելի, աշնան հավը:

Գինի խմողը կհարբի, կռիվ գնացողը կմեռնի:

Դատարկ կարասի ձայնը բարձր է դուրս գալիս:

Դեռ չծնված երեխային շոր մի՛ կարիր:

Դուռը փակ պահիր, հարևանիդ գող մի բռնի:

Երկաթը տաք-տաք կծեծեն:

¹¹⁴ Նույն տեղում, էջ 146:

¹¹⁵ «Բազմավեպ», հ. ԼԳ, Վենետիկ, 1875, էջ 40:

Այծը իր ոտքից են կախում, ոչխարը՝ իր:
Էշը դատի, ձին ուտի:
Մինչև հասար բարակի, բարակի հոգին դուրս կգա:
Թրի կտրածը լավանում է, լեզվինը՝ ոչ:
Իմաստունի հետ քար քաշի՛ր, հիմարի հետ փլավ մի՛ ուտիր:
Ինչ անեմ աշխարհի հարստությունը, երբ կոշիկս նեղ է ոտքիս:
Ինչ բրդում ես, այն էլ ուտում ես, ինչ ասում ես, այն էլ լսում ես:
Որտեղ հաց, այնտեղ կաց:
Սեփական հարգը չիմացողը, ուրիշների հարգը չի կարող իմանալ:
Խոսքը մեծին, ջուրը փոքրին:
Ծերանաս, ծերի դադրը իմանաս:
Ընկել է ծովը, ձեռքը փրփուրին է գցում:
Կատվի խաղը, մկան մահն է:
Սպասիր ոտքիս տեղ անեմ, տես գլխիդ ինչ կբերեմ:
Կուշտը քաղցածին մանր է բրդում:
Կռկռան հավը ածան է լինում:
Ձուկը գլխից է հոտում:
Մի Աստված, անթիվ արարածներ:
Շատ մի՛ սիրիր, ատել կա, շատ մի՛ ատիր, սիրել կա:
Շատ իմացողը շատ էլ սխալներ է անում:
Չունես փող, մտի՛ր հող:
Ջուրն ընկնողը անձրևից չի վախենում:
Քամու բերածը քամին էլ տանում է:

Համընդհանուր իմաստախոսություններ¹¹⁶

Նպատակը տեսնելը դյուրին է, բայց նպատակին հասնելը՝ դժվար:
Մեր եղածից ավելին ենք կարծում ու կարծածից էլ ավելին ենք ուզում երևալ:

¹¹⁶ «Բազմավեպ», հ. ԼԲ, Վենետիկ, 1874, էջ 146:

Ում կարողությունը հավասար է իր բաղձանքին, երջանիկ է, որովհետև մարդու կարողությունը քիչ բանի է հասնում, դրա համար էլ պետք է չափավորի իր բաղձանքը:

Կեղծավորն իր անկեղծությունն է գովում, ազահն՝ իր առատաձեռնությունը, նյութապաշտը՝ իր համեստությունը, չարն՝ իր բարությունը:

Իմաստությունը ջահ է, որ ծածկել չի լինի, որքան մութ տեղ ես տանում, այնքան փայլում է:

Արքունիքում ավելի շատ դիմակ ես փնտրում, քան դեմք:

Մարդն իր չունեցածն է երջանկություն համարում:

Հավատքը առանց բարեգործության, զանգակ է առանց լեզվի:

Իշխանների սիրտը պետք է շինված լինի մի քիչ մոմից, մի քիչ շաքարից, մի քիչ էլ պղնձից:

Մարդու կիրքը առագաստի նման է, վարպետ նավապետը գիտի նրանով նավը նավահանգիստ հասցնել:

Տգիտությունը մտքի գիշեր է՝ անասող և անլուսին:

Աշխատելը երկու մեծամեծ բարիքի պատճառ է՝ մոռացության և ակնկալության:¹¹⁷

Խղճմտանքը և՛ դրախտ է, և՛ դժոխք:

Ուզու՞մ ես վիճակիցդ միշտ գոհ լինել, նայիր ցած և ոչ թե վեր:

Լավ է հարգել իմաստուն թշնամուն, քան հիմար բարեկամին:

Մի առ մի գործիր և շատ մեծամեծ գործեր կկատարես:

Որքան առաքինի ենք դառնում, այնքան ավելի ենք սիրում առաքինությունը, ինչպես երկու բարեկամ սկսում են իրար ավելի սիրել, երբ միմյանց ավելի են ճանաչում:

Մերը կարող է, ոսկին ամենակարող:

Լավ է աղքատ, քան տղետ:

Անզլիական առածներ¹¹⁸

¹¹⁷ «Բազմավեպ», ԼԳ, էջ 189:

¹¹⁸ «Բազմավեպ», հ. 26, էջ 228:

Ո՛վ փափագում է հաջողություն, պետք է առավոտյան հինգին վեր կենա:

Ո՛վ որ արդեն հաջողության **մեջ է կարող է մինչև** ժամը յոթը քնել:

Օգտագործված գրականության ցանկ

ԳՐՔԵՐ

1.Ն.Ադոնց, Երկեր հինգ հատորով, Դ, Քննական պատմություն Հայոց, Երևան, 2009

2.Ադոնց Ն. Երկեր հինգ հատորով, Ե, Հայ-բյուզանդական ուսումնասիրություններ, Երևան, 2012

3.Աստվածա**շաունչ**, Մատյան Հին և Նոր կտակարանների, Արևելահայերեն նոր թարգմանություն, Մայր աթոռ Ս.Էջմիածին, 2015

4.Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, Թարգմանությունը Վ.Ա.Գևորգյանի, Երևան, 1971

5.Արիստոտել, «Պոետիկա», Երևան, 1955

6.Դավիթ Անհաղթ, Երկեր, Երևան, 1980

7. Դոլուխանյան Ա., Դրվագներ հայ քննադատական մտքի պատմությունից, Երևան, 2009

8. Դոլուխանյան Ա.,Ֆրեդերիկ Մակլերը հայագետ, Երևան, 2011

9. Դոլուխանյան Ա., Սեն-Մարտենը ֆրանսիական հայագիտության հիմնադիր, Երևան, 2014

10. Թումանյան Հովհ. Ընտիր երկեր, հ. II, Երևան, 1985

11.Կիրակոս Գանձակեցի, Պատմությա**սուն** Հայոց, Աշխատասիրությամբ Կ.Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961

12. Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Թուղթ Վահան Մամիկոնյանին, Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Բագրատ Ուլուբաբյանի, Երևան, 1982

13. Մարկոս Ավրելիոս, Իմաստասիրական և խրատական թղթերը, Վենետիկ, 1868

14. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի, Երևան, 1981

15. Մուրաֆյան Կլոդ, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Երևան, 2001
16. Մուշեղյան Ա.Վ., Մովսես Խորենացու դարը, Երևան, 2007
17. Նիկոլայ Ռերիխ, Հեքիաթներ, Թարգմանությունը ռուսերենից՝ Սուրեն Դավթյանի, Երևան, 2016
18. Շաթիրյան Մ., Արծաթե դար, Երևան, 2016
19. Ով ով է, Հայեր, Կենսագրական հանրագիտարան, հ. I, Երևան, 2005
20. Ով ով է, Հայեր, Կենսագրական հանրագիտարան, հ. II, Երևան, 2007
21. Պալասանյան Ստ., Պատմություն Հայոց, սկզբից մինչև մեր օրերը, Թիֆլիս, 1895
22. Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. 1, Երևան, 1978
23. Քսենոփոն, Անարասիս, Թարգմանությունը Սիմոն Կրկյաշարյանի, Երևան, 1970
24. Французско-русский фразеологический словарь, Москва, 1963
25. Petit Robert-2, Paris, 1988

բ. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ

1. «Բազմավեպ», հ. 24, Վենետիկ, 1866
2. «Բազմավեպ», հ. 25, Վենետիկ, 1867
3. «Բազմավեպ», հ. 26, Վենետիկ, 1868
4. «Բազմավեպ», հ. 28, Վենետիկ, 1870
5. «Բազմավեպ», հ. 30, Վենետիկ, 1872
6. «Բազմավեպ», հ. ԼԱ, Վենետիկ, 1873
7. «Բազմավեպ», հ. ԼԲ, Վենետիկ, 1874
8. «Բազմավեպ», հ. ԼԳ, Վենետիկ, 1875
9. «Բազմավեպ», Վենետիկ, 1877
10. «Բազմավեպ», հ. ԼԸ, Վենետիկ, 1880
11. «Բազմավեպ», հ.ԼԹ, Վենետիկ, 1881

12. «Բագմավէպ», հ. Խ, Վենետիկ, 1882

13. Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, «Գանձասար» հանդես, 1991

Բովանդակություն

1. Նախաբան

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

2. Դաստիարակչական, բարոյախոսական դասեր

էջ

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

3. Հայոց պատմության և մշակույթի ճշգրիտ դաս

էջ

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

4. Հռոմի կայսեր Մարկոս Ավրելիոսը բարոյախոս և մանկավարժ

էջ

5. Օգտագործված գրականության ցանկ

էջ